Ազգ

AZG
armenian newspaper

Յունիս 30
1992
Երեքշաբթի

երկօրեայ թերթ
Բ տարի, թիւ 52 (144)
գինը 95 կ.

Երեւան 375010
Հանրապետութեան 47

դասիչ 69149

հեռ. 581841, ֆաքս 562941, տելեքս 243266 SULA SU

ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ-ԱԳՍ.ՍՍՀ
Մ. Գորկու անվան
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԱՆ

Մ. Նահանգները առկախելու է Հայաստանին տրամադրվելիք վարկերը

Նյու Յորքում հրատարակվող հայտնի «Պլաց Օյլգրամ Նյուզ» օրաթերթը հրապարակել է մի լուր, ըստ որի ԱՄՆ պետքարտուղարությունը որոշել է ցնոր տնօրինություն առկախել Հայաստանին 60 հազար տոննա դիզելային վառելանյութի վարկեր տրամադրելու որոշումը: Այս կապակցությամբ Ջեյմս Բեյքերը հայտարարել է, թե որեւէ օժանդակության համար *«Հայաստանը նախ պետք է վերջ տա Ադրբեջանի հետ իր պատերազմին»*: ■

Երկրաշարժ Կալիֆոռնիայում

Հաջորդական երկրաշարժեր, որոնցից մեկը ամենաուժեղն էր վերջին 40 տարում, ցնցեցին Հարավային Կալիֆոռնիան, պատճառ դառնալով 1 երեխայի մահվան եւ 150 հոգու վիրավորվելուն: Առաջին ցնցումը 7,4 բալ էր Ռիխտերով, էպիկենտրոնը՝ Մոհեյզ անապատը: Երկրորդը հետեւեց 3 ժամ հետո, 6,5 բալ ուժգնությամբ: Կան ավերածություններ: ■

Խորհրդարանը քննարկում է ԼՂՀ ճանաչման հարցը

Գերագույն խորհուրդ մտած «հիդությանն» պատճառը թերեւս իր աթոռակիցին հասած անհանդուրժականությունն է: Եթե նախագամի բան է առաջարկում, ապա գամավորական խմբերը պետք է ենն հակառակը, իսկ եթե որեւէ դիմադիր խումբ ինչ-որ առաջարկ ցնում, ապա նախագահողն է ությամբ այն երջանցում: Մի ֆով, երեկ էլ, ինչպես տարվա ս «նստաշրջանային օրերին» ռապետության Գերագույն խորհրդ. պատգամավորներին բաժան- եռոյա նիստերի օրակարգի նագիծը մի կողմ դրվեց, եւ նախոող Արա Սահակյանն առաջարանցնել ԳԽ նախագահի տեղաի ու քարտուղարի ընտրություններ: Սակայն «Ազգային դաշինք» գամավորական միավորման ադարկով քվեարկության դրվեց սկիզբում ներկայացված որոշումը. խորհրդարանը չընդունեց: Փորենը, նույն դաշինքի կողմից Շարե Քոչարյանի ներկայացմամբ մի ի քվեարկություններից հետո 120 նով հաջողվեց որոշես հրատարդ մտցնել ԼՂՀ ճանաչման խնդի- Այդ առթիվ ելույթ ունեցավ նաեւ խագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը. առաջին փաստաթղթի մերժումը ահատեց որոշես խորհրդարանի լրության փաստ, իսկ երկրորդ դեպքում ց, որ, ըստ երեւույթին, «հարցն ա- մտցվեց եւ խորհրդարանը չկարդավ կողմնորոշվել»:

Ըստ նախագահի, խորհրդարանը ընտրեց իրավիճակի լրջությունը. այդ պատճառով, ընդունելով ան որոշում, Գերագույն խորհրդ- մ տիրապետող է դառնում պատզմի քաղաքականությունը, որի նա չի կարող հաշտվել եւ այդ սին ցանկանում է հայտնել ժոլովրդին իր մեկժամյա հեռուստաեյին ելույթի ընթացքում:

Այնուհետեւ, խորհրդարանը 164 ցնով ընդունեց Յուրի Հարությունանի առաջարկը ստեղծել Շահումանի երջանում կատարվածի ուսումնասիրման խորհրդարանական ննձնաժողով: ■

Տեր-Պետրոսյանը ՀՀՇ-ական բացահայտում է անում

Երեկ մոտ մեկուկեսժամյա իր ոուսանելույթում Հայաստանի նագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը ոդրադառնալով հանրապետության ցիալ-քաղաքական իրավիճակին, ելեց, որ այն վտանգված է: Այդ ստեղծում նա մեղադրեց ընդդիմությանը եւ հատկապես Հայ Հեղափոխական Դաշնակցությանը ու ա Աբեմի Բյուրոյի ղեկավար ռայր Մարուխյանին, բացահայտեվ նաեւ վերջինիս ՊԱԿ-ի հետ ուցած կապը: Նախագահը հրան է արձակել, որպեսզի պրն. Մարուխյանը 48 ժամվա ընթացում թողնի Հայաստանի սահմանները: Մի մյուս հրամանագրով արարադատության նախարարությանը դատախազությանը նախագահը պարտավորեցնում է մեկամսյա ժամկետում ստուգել գործող հասարակական-քաղաքական կազմակերպությունների գործունեության օրինականությունը: ■

Հայաստանի պատվիրակությունը բռնեց Ստամբուլի քննությունը

«Ջումհուրիյեթ»ի թղթակից Ս. Գյոչենը Ստամբուլից հաղորդում է հատուկ «Ազգ»ին



Սինան Գյոչենը նախագահի օդանավում

Ստամբուլ.– Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ Ադրբեջանի Հանրապետության նախագահ Աբուլֆազ Էլչիբեյի Սեւծովյան երկրների տնտեսական համագործակցության խորհրդաժողովի կապակցությամբ Ստամբուլում գտնվելը առաջ էր բերել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կայանալիք գագաթաժողովի հավանականությունը:

Լրագրողները, որոնք հատկապես հետեւում էին Սեւծովյան ժողովին, բոլոր երեք օրերի ընթացքում անհամբեր սպասեցին, թե արդյոք Էլչիբեյ–Տեր-Պետրոսյան հանդիպումը կկայանա՞, թե ոչ:

Վերջին օրերին Ղարաբաղում իրադրության խիստ սրման հետեւանքով Ադրբեջան-Հայաստան հարաբերությունների խարցը խորհրդաժողովի գլխավոր նյութերից մեկն էր դարձել, որի շնորհիվ էլ Տեր-Պետրոսյանը, որն առաջին անգամ էր ոտք դնում Թուրքիա, խորհրդաժողովում դարձավ ամենահայտնի դեմքերից մեկը: Տեր-Պետրոսյանին հետեւում էր լրագրողների հսկայական բանակ: Նրա հետ զրուցող բոլոր լրագրողները ընդհանրապես տալիս էին նույն հարցը՝ Էլչիբեյի հետ տեսակցելո՞ւ եք, որին Հայաստանի նախագահը տալիս էր նույն պատասխանը. *«Հանդիպմանը պատրաստ եմ»*:

Այսպիսով, Հայաստան-Ադրբեջան հավանական մի գագաթաժողովի կապակցությամբ կողմերից մեկից հավանություն ստացող լրագրողները այս անգամ Էլչիբեյի հետեւից ընկան: Վերջինս խնդրո առարկա գագաթաժողովի իրականացման համար հույս չներշնչող բացատրություններ էր տալիս: Նա ասաց, թե հանդիպումից կայանալիք հանդիպումը, հակառակ սպասվածին, կարող է բացասական արդյունքներ ունենալ եւ դրա համար էլ մերժում էր նման որեւէ հանդիպում: Չնայած Էլչիբեյի «հանդիպումից չեմ հանդիպի» վերաբերմունքին, լրագրողները, որոնք դեռեւս չէին կորցրել Հայաստան-Ադրբեջան գագաթաժողովի հույսը, իրենց ամենագործնական քայլն արեցին հունիսի 24-ին, երբ Սեւծովյան երկրների տնտեսական համագործակցության նիստի պատասխանական ընդունելությունն էր:

Լեւոն Տեր-Պետրոսյանի շուրջ հավաքված լրագրողները նրան խնդրեցին մոտենալ Էլչիբեյին ու նրա հետ ձեռքով բարեւել, որն այդ մոջոցին գտնվում էր 20 մ հեռավորության վրա: Տեր-Պետրոսյանը դա ընդունելով, առաջացավ դեպի Էլչիբեյը: Այսպիսով, լրագրողների ջանքերով իրականացվում էր այն գագաթաժողովը, որը չէր հաջողվել իրականացնել մի շարք երկրների ղեկավարներին, եւ դիվանագետներին: Սակայն Էլչիբեյը նկատելով, որ Տեր-Պետրոսյանը դեպի իրեն է մոտենում, հանկարծ շրջվեց եւ հեռացավ: Այսպիսով, այս պատմական գագաթաժողովն ի չիք դարձավ:

Լեւոն Տեր-Պետրոսյանը Ստամբուլում գտնվելու ընթացքում լրագրողների առաջ շարունակ հանդես էր գալիս Էլչիբեյի հետ հանդիպելու պատրաստակամությամբ. *«առանց նախապայմանի»*: Տեր-Պետրոսյանն ասում էր, թե *«հայկական կողմը ցանկանում է, որ տեսակցությունները ժամ առաջ սկսվեն եւ նույնիսկ պատրաստ են այն իրականացնել, բավարարելով Էլչիբեյի պայմանները»*: Իսկ ադրբեջանական կողմը գտնում էր, որ այդ հանդիպումը առանց նախնական պատրաստվածության ավելի շատ վնաս կբերի, քան օգուտ: Ադրբեջանական պատասխանատուները առաջ էին քաշում այն տեսակետը, թե *«Տեր-Պետրոսյան-Էլչիբեյ գագաթաժողովի, որից շատ բան էր սպասվում, բացասական արդյունքի դեպքում առաջիկա հանդիպումները խիստ կվտանգվեն»*: Այսպիսով, Ադրբեջանը հանդիպման դուռը կիսաբաց էր թողնում, միաժամանակ պաշտպանում պատվիրակությունների մակարդակով կատարվելիք նախապատրաստական աշխատանքների անհրաժեշտության գաղափարը:

Հայաստանի Հանրապետության նախագահ Տեր-Պետրոսյանը այս խորհրդաժողովում ամենահայտնի առաջնորդներից էր, նաեւ ամենահաճելիներից մեկը: Լրագրողներից խույս չտալը, հարցումներին պատասխանելիս հանգիստ ոճը, թուրքերեն լեզվով որոշությունը հարցնելը եւ որոշ հարցումներին թուրքերեն պատասխանելն այն ազդակներից էին, որոնք Տեր-Պետրոսյանին ընդհանուր առմամբ դարձրին «հաճելի»: Բացի դրանից, Հայաստանի պատվիրակության բոլոր անդամների դրսեւորած կիրք կեցվածքը ուշադրության էր արժանանում. Տեր-Պետրոսյանի օգնական Ռուբեն Շուգարյանը, որը լրագրողներին օգտակար լինելու համար հնարավորության սահմաններում անում էր ամեն ինչ, հետո ՀՀ արտգործնախարարության Թուրքիայի պատասխանատու Մուրադ Բոջոլյանի լրագրողների համար կատարած թուրքերեն հանգամանալից բացատրությունները շատ դրական կերպով ազդեցին, որպեսզի հայկական պատվիրակության եւ լրագրողների միջեւ իրականանա հաճելի երկխոսություն:

Հայաստանի պատվիրակությունը Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ Ստամբուլյան փորձությունից շատ հաջող դուրս եկավ: ■

Միտերանը այցելում է Սարաեւո

Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Միտերանը կիրակի օրը այցելեց Բոսնիայի մայրաքաղաք Սարաեւո, խաղաղարար առաքելությամբ: Նախագահը քայլեց ավերակված Սարաեւոյի փողոցներով, այդպիսով մի քանի ժամ ընդմիջելով ռմբակոծումները, որոնք վերսկսվեցին նույնիսկ: Նա փորձ արեց վերաբացել տալ քաղաքի օդանավակայանը մարդասիրական օգնությունների առաջ: Նրա մեկնումից հետո սերբերը հայտարարեցին, թե օդակայանը վերահանձնվել է ՄԱԿ-ի ուժերին: Այսպես կողմից, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը հայտարարեց, թե գինյալ միջամտության կարող է դիմել, եթե այս (երեկ) գիշեր չդադարեն Սարաեւոյի ռմբակոծումները սերբերի կողմից: Եւրահամայնքը սպառնաց թիկունք կանգնել նման միջոցառմանը: ■

Ադրբեջանցիները Հռոմում են

Երեկ Հռոմում բացված ԵԱՀԽ-ի Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտի կարգավորման հարցերով նախնական հանդիպման երրորդ փուլին մասնակցում է Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական համայնքի ներկայացուցիչ, Շուշիի գործադիր իշխանության ղեկավար Նազիմ Բախմանովը: Ադրբեջանի պատվիրակությունը գլխավորում է խորհրդարանի անդամ Նադիր Մեհդիեւը:

Հայաստանի պատվիրակության կազմում են խորհրդարանի Արցախի հարցերով հանձնաժողովի քարտուղար Սուրեն Զոլյանը եւ անկախ պետականության վերականգնման հանձնաժողովի անդամ խաչիկ Բեգիրջանը: Լեռնային Ղարաբաղի պատվիրակությունը չի մեկնել Հռոմ, քանի որ ԼՂՀ-ի խորհրդարանը դեմ էր արտահայտվել ԼՂՀ-ի պատվիրակության մասնակցությանը: ■

Հուլիսի 21-ից կաշխատի Մեղրիի կամուրջը

Հունիսի 27-ին Հայաստանի եւ Իրանի մաքսային վարչությունների ներկայացուցիչների կողմից Երեւանում ստորագրվեց մի արձանագրություն, ըստ որի 1992 թ. հուլիսի 21-ին նշանակվում է Մեղրի-Նարդուզ մաքսային անցակետի բացման օր: Հաստատվելու է հնգօրյա աշխատանքային շաբաթ. անցակետը չի գործելու ուրբաթ եւ կիրակի օրերին: Մաքսատներն սկզբնական շրջանում կըստանան միայն ադրանքային փոխադրումներով եւ առեւտրական աշխատանքներով զբաղվող կազմակերպություններին, իսկ ուղեւորների երթեւեկության հարցը կկարգավորվի նշված ժամկետից սկսած երկու շաբաթվա ընթացքում: ■

«Ազգ» երկօրյա թերթի գլխ. խմբագիր Հ. Ավետիքյանին

«Ազգ» թերթի 1992 թ. հունիսի 25-ի համարում տպագրվել է մի հոդված «Շահումյանից եւ Մարտակերտից ավելի քան երեք հազար ռուս փախստականներ» վերնագրությամբ, որի վերջին պարբերության մեջ նշված է. *«... Երեկ Մեղրիում էր գտնվում Հայաստանում Իրանի դեսպանատան ներկայացուցիչը...»*:

Հայտնում ենք Ձեզ, որ վերջին օրերին Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատնից որեւէ ներկայացուցիչ Մեղրի չի մեկնել եւ սկզբունքորեն որեւէ տեսակետ այդ առթիվ չի ներկայացվել թերթերին: Խնդրում ենք, հաշվի առնելով մամուլի վերաբերյալ ընդունված օրենքը, հանդես գալ հերքումով:

Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան հավատարմատար ԲԱՇԻՍ ՂԱՍԵՄԻ

Խմբ.– Խոսակցության առարկա լուրը մենք ստացել էինք ՀՅԴ ՄՏԿ-ից:

Լայնածավալ հարձակում Իջեւանի սահմանների վրա

6 զոհ, վիրավորներ եւ ավերածություններ

Իջեւան. Վերջին 3-4 օրերի ընթացքում իրադրությունը կտրուկ սրվել է: Տանկերից, «Գրադ» կայանքներից եւ խոշոր տրամաչափի հրանոթներից հրետակոծվել են սահմանամերձ Բերքաբեր, Սարիգյուղ, Այգեհովիտ, Ազատամուտ, Սեւքար եւ Այաջուր գյուղերը: Վնասվել է Ազատամուտի կպքի Ֆաբրիկայի շենքը, ավերածություններ կան նաեւ Այաջուր գյուղում: Վերջին օրերի ընթացքում հայկական կողմից զոհվել է 6 մարդ, որոնցից 4-ը խաղաղ բնակիչներ են երկուսը Այգեհովիտ գյուղից, մեկը Սարիգյուղից, մեկը Այաջրից: Մենակյան զոհեր են տվել նաեւ Իջեւանի վաշտն ու Սարիգյուղի երկրապահ ջոկատը, կան նաեւ վիրավորներ: Երեկ առավոտյան ժամը 5-ին վերսկսվել են շրջանի գրեթե բոլոր սահմանամերձ գյուղերի հրետակոծումները, որոնք, սակայն, ինքնաթաշտանության ուժերի ձեռնարկած պատասխան գործողությունների հետեւանքով ժամը 1-ին դադարել են: Երեկվա ընթացքում հայկական կողմից նոր զոհեր եւ վիրավորներ չեն եղել: Հակառակորդի կորուստների մասին տվյալներ չկան: Երեկոյան փոխհրաձգությունը շարունակվում էր միայն փոքր տրամաչափի զինատեսակներից:

Սիսիան. Շաբաթ օրը, հունիսի 27-ին «Գրադ» կայանքներից ինտենսիվ հրետակոծության են ենթարկվել շրջանի Շաղաթ եւ Անգեղակոթ գյուղերը: Անգեղակոթում ավերվել է 3 տուն: Բարեբախտաբար զոհեր եւ վիրավորներ չկան: Հայկական ինքնաթաշտանական ուժերի պատասխան գործողություններից հետո թշնամին դադարեցրել է հրետակոծումները: Երեկ եւ նախորդ օր գյուղերը գնդակոծվել են միայն փոքր տրամաչափի զինատեսակներից:

Կաթան. Հունիսի լույս 29-ի գիշերը Ադրբեջանի Ջանգելանի շրջանի տարածից գնդակոծվել եւ հրետակոծվել են Կաթան քաղաքն ու մերձակա գյուղերը: Զոհվել են երկու երեխաներ 12 եւ 14 տարեկան: Երեկ երեկոյան ժամը 21-ի տվյալներով, շարունակվում էր Գեղանուշ գյուղի հրետակոծումը: ■

digitised by A.R.A.R.@

Իշխանությունները նպաստում են ընդդիմության համախմբման

Շահումեանի դարաշրջանը քաղաքական փոքրիկ առաջացրեց Հայաստանում. Հայկական ինքնաղաւեսդանության դարաշրջանի դարաշրջանների ու հանգամանքների շուրջ խոսակցությունները սկզբում միջանցքներում շշուկների եւ ապա արդէն բացայայտ մեղադրանքների ձեւով դարձեալ արծարձեցին Արցախի հիմնահարցի լուծման Հայաստանի Հանրապետության դաւեսանական քաղաքականության հարցը: Ակներեւ դարձաւ, որ այդ քաղաքականությունը, ներքին ճակատում, յաւելեալ լուսաբանումների, բացատրությունների եւ թերեւս նոյնիսկ վերանայման կարիք է զգում:

Հակառակ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսեանի այն փաստարկումներին, թէ վերջին դարաշրջանները հետեւանք են ԼՂՀ-ի եւ Հայաստանի իշխանությունների միջեւ փոխհամաձայնողական գործողությունների բացակայության, կուսակցական շահարկման եւ մանաւանդ ԼՂՀ-ի իշխանությունների ԵԱՀԽ-ի Հռոմի ժողովին չմասնակցելու, այստեղծեր, ըստ ընդդիմության որոշ ներկայացուցիչների, մանաւանդ ՀՅԴ-ի, դարաշրջանը կազմակերպուել էր իշխանությունների կողմից: Նման ամբաստանության եկաւ միանալու նաեւ ԼՂՀ-ի Գերագոյն Խորհրդի նախագահի դաւեսական Գէորգի Պետրոսեանի, դարձեալ ՀՅԴ-ի ներկայացուցիչ, այն յայտարարությունը, թէ դարաշրջանները հետեւանք էին ՀՀ իշխանությունների որոշ համաձայնությունների: Այս ուղղությամբ քաղաքական օտարի տպաւորություն բողոք Հելսինկիում ԵԱՀԽ-ի շրջանակներում Հայաստանի արտգործնախարարության ներդրայի բաժնի դաստանական Կրիստիան Տեր-Ստեփանեանի ստորագրած այն փաստաթղթի հրապարակումը, որում Արցախը նշում է որպէս Ադրբէյջանի մաս: Հայաստանի իշխանությունները հակադարձելով այդ մեղադրանքներին, բնականաբար փորձում էին հակառակն ապացուցել որն ի դէպ միեւ չէ որ նրանց յաջողում էր, քանի որ իշխանություններն իսկապէս խոցելի դիրքում են դաւեսական հարցերում լուռ մնալու դաստարդարությամբ, որն էլ լաւագոյնս օգտագործում էր մանաւանդ ՀՅԴ-ն: Ի դէպ ԼՂՀ Գերագոյն Խորհրդի նախագահի ընտրությունների ընթացքում ՀՅԴ-ՀՀՇ դայքարը անմիջապէս տեղափոխուեց Հայաստան եւ աւելի եւս շիկացրեց աւանց այն էլ լարուած քաղաքական մթնոլորտը: Եւ դրա համար էր որ ԼՂՀ-ի իշխանությունների ներկայացուցիչները Հայաստանի խորհրդարանում իրենց ելոյթների ընթացքում հասկացրին, թէ միջկուսակցական հակասությունները Երեւանում պէտք է հարթեն:

Հայաստանի իշխանությունների եւ ընդդիմադիր քաղաքական ուժերի միջեւ աւծակատումն աւելի սրուեց մի քանի դէպքերի, որոնց բում երկու դպրոցականների սպանության ու հեռուստատեսության ղեկավարության ոչ ժողովրդավար որոշումներից յետոյ, իրադարձություններ, որոնք հասարակական հնչեղություն ստացան:

Թւում էր որ Հայաստանի խորհրդարանի արտահերթ նստաշրջանը կը մեղմի փողոցում տիրող աւծակատումն ու լուրջ որոշումներով կը նպաստի քաղաքական կայունացման եւ երկխօսության կայացման, մանաւանդ Արցախի հարցով: Մինչդեռ դատահեց հակառակը եւ որին, դրժբախտաբար նպաստեցին թէ հանրապետության նախագահը, թէ դաւեսական նախարարը եւ թէ ընդդիմադիր որոշ կողմեր: Ահա այս դայմաններում ԼՂՀ-ի անկախության ճանաչման, միջազգային որեւէ փաստաթղթում ԼՂՀ-ն Ատրբէյջանի մաս ճանաչելու բացառման, ժողովրդավարական գործընթացների ամրապնդման ու դեսական կառուցուածքներում փոփոխության անհրաժեշտության հիման վրայ խորհրդարանում ստեղծուեց «Ազգային Դաշինք» ընդդիմադիր բլոկը, որի գոյացումը զարմացրեց շատերին: Դաշինքի ստեղծմանն անուղղակիօրէն նպաստեցին հենց իրենք, իշխանության բարձրագոյն մարմնի ներկայացուցիչները: Նախագահ Լեւոն Տեր-Պետրոսեանը կուսակցություններին մեղադրելով նոյնիսկ չխուսափեց արտայայտել այն միտքը, թէ սփիւռքում տոն տուողները կուսակցությունները չեն, այլ առողջ մտածող զանգուածները... Նախագահը կրկնեց ճնշադաստությունների ընթացքում միշտ ասուածի բաժինը ՌԱԿ-ին ու նրա ներկայացուցիչներին վերադարձնելու իր սովորությունը:

Հայաստանի քաղաքական կառուցուածքում «Ազգային Դաշինք»ը դեռեւս լուրջ հեռանկարներ չունի իր ուրոյն տեղը գտնելու, մանաւանդ որ այդ դաշինքի մէջ մտնող կուսակցությունների եւ կազմակերպությունների միջեւ գաղափարական եւ գործելակերպի տարբերությունները շատ խորն են: Տարբեր են նաեւ նրանց նպատակները ու մարտավարական քայլերը: Հանրապետության նախագահի կամ կառավարության հրաժարականը ոչ բոլորն են դատանջում, մանաւանդ ՀՌԱԿ-ը: Դաշինքի յեսագայ ճակատագիրը ուղղակի կամ անուղղակիօրէն կախուած կլինի իշխանությունների վերաբերմունքից. կ՚ընդունե՞ն նրան որպէս օգտակար ընդդիմություն, թէ՞ կը փորձեն վարկաբեկել այն: Իր հերթին, ընդդիմությունը հանդէս կը գա՞յ կառուցողական աշխատանքով, թէ՞ կը վարի իրավիճակը աղակայունացնելու քաղաքականություն:

ՅՈՎԻԿ ԷՕՐՏԵՔԵԱՆ

Մեղրիում արտակարգ դրություն է



Հունիսի 23-ին, երբ Իրանում գտնվող հայ լրագրողներս Թավրիզից եկանք Ջուլֆա, արդեն ուշ երեկո էր: Մեր վարորդը Ալին, խոստացաւ մեկ ժամից հասցնել Մեղրու կամուրջ: Մի քանի կիլոմետր էր մնացել, որ տեղ հասնենք, երբ հեռվից լսեցին հրանոթների համազարկեր:

«Ազերիներն են կրակում հայկական գյուղերի վրա, ասաց Ալին: *Լաւ կլինի հեռ վերադառնանք»:*

Արտսխի մյուս ափին երեւացին Օղուբաղը, հետո Զոքանը: *«Նրանցները հանգցրել են, որ տների վրա չկրակեն»,* շարունակեց վարորդը: Եւ իրոք, երբ Օղուբաղում հատուկենս լոյսեր կային վառված, ապա Զոքանն ամբողջությամբ ընկղմված էր խաւարի մեջ: Մեզ հանդիպակաց ընթացող մերենայի դահանջով կանգնեցինք: Պարզուեց, որ իրավիճակը սրված է, եւ խորհուրդ չեն տալիս գիշերով անցնել սահմանը: Վերադարձանք Ջուլֆա: Իսկ առաւոտյան, երբ քաղաքապետարանի ներկայացուցչի ուղեկցությամբ հասանք կամուրջ, ամեն ինչ դարձ դարձաւ: Իրանցի սահմանապահները խոստովանեցին, որ մի օր առաջ Նախիջեւանի տարածքից արկեր են ընկել Իրանի սահմանամերձ տարածքի վրա: Կամրջի վրա ոչինչ չէր ընկել: Սահմանապահներից մեկը Ռաֆիքը, դատմեց, որ ամեն օր հերթապահության ժամանակ ականատես են լինում, թէ ինչպես են կողմերը կրակում միմյանց վրա:

Սահմանն անցանք, ու հենց կամրջի վրա մեզ դիմաւորած Մեղրու շրջխորհրդի նախագահ Ենոք Անդրեասյանից եւ սահմանապահ ուղեկալի ներկայացուցիչներից իմացանք, որ շրջանում արտակարգ դրություն է: *«Երեք օր շարունակ գնդակոծվում է շրջանի տարածքը,* ասաց շրջխորհրդի նախագահը: *Արտակարգ դրություն է մտցվել»:* Պրն. Անդրեասյանն ասաց, թէ շրջանի իրադրության կայունությունը կախված է նաեւ մեծ քաղաքականությունից: Օղուբաղից նորից սկսվել է հայկական գյուղերի գընդակոծումը: Այդ արկերից մեկն էլ ընկել է Իրանի Իսլամական Հանրապետության տարածքը հենց այն դահին, երբ կամրջի վրա դաշնական ընդունելություն է եղել: Ըստ շրջխորհրդի նախագահի, այդ գործողությունը քաղաքական նպատակ էր հետապնդում, այն է ազդել հայ-իրանական փոխհարաբերությունների վրա: Ավելին, հունիսի 23-ի երեկոյան իրանցիները քաջատեղեակ լինելով, որ արկերը գցել են ազերիները, քողոք են ներկայացրել Հայաստանի սահմանապահներին: Ըստ նախագահի ունեցած տեղեկությունների, նմանօրինակ մի քողոք էլ Իրանի կողմը դեսք է ներկայացներ Նախիջեւանին: Այդ մասին դարձեալ դարձեալ ճշգրիտ տեղեկություն չկան: Մյուս կողմից, Աղրբեջանի Զանգելանի շրջանից դարբերաբար գնդակոծում են Մեղրիի սահմանապահ ուղեկալն ու դիրքերը: Պրն. Անդրեասյանի կարծիքով, դա ավելի շատ դիրքային դայքար է: Ազերիները ցանկանում են գրաւել մեր բարձունքներն ու դիրքերը:

«Մեր զանգվածային լրատվության միջոցները շատ ժամանակ չգիտեմ, թէ ում միջոցով են լուր ստանում, հատկապես «Լրաքեր» ծրագիրը, քողոքեց պրն. Անդրեասյանը: *Տարօրինակն այն է, որ լինելով դեսական ծրագիր, մեկ էլ այնդիսի բան է հաղորդում, որ ինձ դեսության ներկայացուցիչս, դնում է ծանր կացության մեջ: Զարմանալի է, որ այդ լուրերը դեսական կառույցներից չեն ստանում: Չգիտեմ, դա անվստահությո՞ւն է տեղական իշխանությունների նկատմամբ, թէ ուղղակի ուրիշ համակարգ է գործում:*

Ես հասկանում եմ, կա քաղաքականություն, կա բարձր իշխանություն ու կառավարություն, բայց նաեւ կան հարցեր, որոնք առանց մեզ հետ համաձայնեցնելու չի կարելի երեւ տալ: Լրատվության մյուս միջոցներն այնքան վստանգաւոր չեն, որքան հեռուստատեսությունը: Ամեն մի բան կարող է ավելորդ հուզումների դատճառ դառնալ»:

Սենք երկար խոսեցինք, թեեւ նրա առանձնասենյակում հեռախոսազանգերը չէին լռում: Նախագահը դատասխանում էր, կարգադրություններ անում, վրդովվում, երբ Մեղրիի ուղղաթիռը, սխալված կամ ինչ-որ մեկի քմահաճույքով վայրէջք էր կատարում Կաղանում:

Դատերազմական իրադրությունը զգացնել էր տալիս:

Այդ օրը համեմատաբար խաղաղ էր նաեւ Կաղանում: Թեեւ, ինչպես ասացին տեղացիները, օր չկա, որ դիմացի ադրբեջանական դիրքերից չկրակեն: Շրջանի բնակատար-ուղեւորատար միավորման տնօրեն Հրանդ Գրիգորյանը թեեւ նշեց, որ ստանվող վառելիքը հազիւ բավարարում է հացի մերենաներին, բայց էլի ամեն ինչ անում են, որպեսզի տրանսպորտը չկանգնի: Օդակայանը չի գործում, իսկ վերեւի ճանապարհի ողջ երկայնքով մոտ երեք մետր բարձրության հողաբմբեր են դատրաստել, որպեսզի դիմացի սարի կրակոցներից քաղաք ելումուտ անող մերենաները չվնասվեն:

Մի խոսքով, մարդիկ արդեն հաշտվել են այդ վիճակին եւ դիմադրում են, որքան կարող են:

ՀԱԿՈԲ ՍՍՍՏՐՅԱՆ
Ջուլֆա-Մեղրի-Երեւան

«Լեռնային Ղարաբաղի ճանաչման խնդիրը հասունացել է»

Հունիսի 26-ի մամուլի ասուլիսում այս կարեւոր հայտարարությամբ հանդես եկաւ Հայաստանի արտգործնախարար Ռաֆիի Հովհաննիսյանը: Հանրապետության կառավարության անդամը բացահայտորեն շեշտեց ԼՂՀ անկախության ճանաչման կարեւորությունը: Այդ հաստատակամությունը ըստ երեւույթին ուներ իր օբյեկտիվ դատճառները, որոնցից մի քանիսը նշեց նաեւ նախարարը: Իր 17-օրյա արտասահմանյան ուղեւորությունների ընթացքում, տարբեր երկրների ղեկավարների ու դիվանագետների հետ հանդիպումներից հետո նա եկել էր այն եզրակացության, որ *«Այդ ընթացքում մեր դիվանագիտությունը բավականին առաջընթաց ունեցաւ եւ խորացաւ»:* Մինչեւիսկ, վերջին հեռախոսազրույցներից մեկի ժամանակ, ԱՄՆ-ի դետքարտուղար Ջեյմս Բեյքերը հավաստիացրել է, որ ստեղծված ծանր վիճակում բացառվում է երրորդ ուժի մասնակցությունը: Նա նաեւ վստահեցրել է, թէ անկասելի է, որ Ադրբեջանը խախտի Հայաստանի սահմանը, այլապես կդատասխանվի: Դետքարտուղարը չի բաժանել, որ ինքը Թուրքիայի եւ Ադրբեջանի ղեկավարների հետ ամենօրյա կապի մեջ է: ■

Ռուսաստանը զենք է հանձնում Ադրբեջանին

Հայաստանի դաշտպանության նախարարության կենտրոնի տվյալներով, Ադրբեջանում տեղակայված ռուսաստանյան բանակի հրամանատարությունը ադրբեջանական զինված ուժերին է հանձնել սպառազինություն, տեխնիկայի եւ զինամթերքի նոր խմբաքանակ, այդ թվում նորագոյն նմուշների 60 տանկ, 70 զրահամեքենա, 70 հետեւակի մարտական մեքենա, 12 «Գրադ» կայանք: Սակայն Երեւանը դեռ ոչ մի դաշտոնական հայտարարությամբ հանդես չի եկել: ■

Հանձնվեցին ԹՄՄ մրցանակներ

Հունիսի 20-ին Արամ Խաչատրյանի անվան տուն-թանգարանում կայացաւ Հայաստանի Թեմերյան Մշակութային Միության 1991 թ. հայտարարված մրցույթի առաջին մրցանակաբաշխության մրցանակների շնորհման արարողությունը: Մրցույթին ներկայացված լաւագոյն գործերի համար Վահան Թեմերյանի անվան մրցանակակիրներ են ճանաչվել երաժշտության բնագաւառում հռչակաւոր դիրիժոր Օհան Դուրյանը, գրականության բնագաւառում բանաստեղծական գիտությունների դոկտոր դրոֆեսոր, բանաստեղծ Արտեմ Հարությունյանը, տաղանդաւոր դերասանուհի Անահիտ Թոփչյանը թատերական արվեստի բնագաւառում, եւ երիտասարդ, շնորհաշատ հրադարակագիր Սամվել Շահմուրադյանը՝ հրադարակախոսության բնագաւառում:

Դափնեկիրներին իր շնորհաւորանքներն ու բարեմաղթությունները հղելով՝ ՀԹՄՄ Կենտրոնական վարչության նախագահ, կոմդոզիտոր Վռամ Գրիգորյանը ներկաներին բազմիկ տեղեկացրեց որոշ մանրամասները վերջերս Ամերիկայի Միացյալ Նահանգներ իր կատարած ուղեւորության, որի ընթացքում կայացաւ ԹՄՄ տարեկան համագումարը Հայաստանի մասնաճյուղին էր դարգեւել Սմսարյան դաստվաւոր գավաթը: Միաժամանակ հայտնվեց, որ հիշյալ համագումարում մամլո լաւագոյն մարմին էր ճանաչվել հայրենական «Ազգ» երկրյան:

Միությունը դրամական դարգեւներով խրախուսեց հրադարակախոս Արմեն Հովհաննիսյանին, բանաստեղծ Վահրամ Մարտիրոսյանին, կոմդոզիտորներ Էդվարդ Հայրապետյանին, Հրաչյա Մելիքյանին, դերասան Արտաշես Ալեքսանյանին եւ քաղաքականագետ Հմայակ Հովհաննիսյանին:

ԱՆԱՀԻՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կիրովականը՝ Վանաձոր

«Ազգային ջոջերը գոհ մնացին»

Եթե արտասահմանից որեւէ մեկը ճամփորդի Հայաստանում, անշուշտ, կդժվարանա կողմնորոշվել «ձորերի» հավաքածուից՝ Զատիձոր, Զորագյուղ, Աղավնաձոր, Զորագես... եւ վերջապես Վանաձոր:

Հայաստանի Գերագոյն խորհուրդը հավանություն է տվել Կիրովականը Վանաձոր անվանելու մասին քաղխորհրդի առաջարկին: Սկզբից ենթադրվեց, երբ քաղխորհրդի նստաշրջանը նախադատվությունը տվեց Վանաձոր անվանը, չնայած «ազգային ջոջերի» հիմնական բացականչություններին քաղաքի բնակչությունը դժկամությամբ ընդունեց այդ լուրը, մանավանդ որ Կիրովականում կա Վանաձոր անվամբ բաղաքամաս:

Քաղաքում անցկացված հասարակական հարցման արդյունքներով գերադասությունը տվեց Գուգարք անվանմանը, որը, բնականաբար, դեսք է ներկայացվեր հաստատման, սակայն եւս մեկ անգամ ոտնահարվեց քաղաքի բնակչության մեծամասնության կարծիքը եւ մի քանի մարդու քմահաճույքով քաղաքը դարձաւեց վաստակեց գյուղի անուն: Իսկ այս ամենը շատ բարդ լուծում կարող է ստանալ:

Եթե դաշտական տեսանկյունով մոտենային հարցին, առանց հաշվի առնելու հնչողության անսովորությունը, հաստատման կներկայացնեին հնագոյն Կանակա անունը: Ինչպէս Վանաձոր անվանումից գոհ մնացին «ազգային ջոջերը» իսկ ժողովո՞ւրդը...:

ՄԱՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ

digitised by A.R.A.R.@

«Ռուսաստանի արտաքին քաղաքական կոնցեպցիան նոր է ձևավորվում»

ասում է Հայաստանում Ռուսաստանի դեսպան Վլադիմիր Ստուպիշինը

Ապրիլի սկզբներին «Ազգ» թերթի թղթակիցը Միլանում հանդիպել էր ռուսական հյուպատոս Վլադիմիր ՍՏՈՒՊԻՇԻՆԻՆ, որը դեռևս այն ժամանակ, ըստ մեզ հասած լուրերի, պատրաստվում էր Հայաստանում դեսպան նշանակվել, եւ հարցազրույց ունեցել նրա հետ: Ապրիլին Ստուպիշինը լավատես էր, ուրախ, բարեհոգի: Ի՞նչ է մտածում նա այժմ, երբ արդեն արտակարգ եւ լիազոր դեսպան է եւ իր լիազորագրերն է հանձնել Հայաստանի Հանրապետության նախագահին: Մեր թղթակից Արմեն ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ երկու օր առաջ հանդիպեց որն. Ստուպիշինին եւ մի քանի հարցեր ուղղեց նրան:

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, ԱՐՄԵՆՊՐԵՍ



– Պրն դեսպան, կազմված Լեռնային Ղարաբաղի վերջին իրադարձությունների հետ՝ իրավիճակը Հայաստանում ծայրահեղորեն սրվել է: Փաստորեն Հայաստանը Ձեզ դիմավորեց այնպիսի լարված իրավիճակում, ինչպիսին չէր եղել նույնիսկ անցյալ տարվա աprիլ-մայիս ամիսներին: Ի՞նչ կասեիք այս մասին:

– Հարցը շատ ընդհանուր է, եւ դժվար է միանգամից պատասխանել: Բայց եկեք խորհենք բարձրաձայն: Իհարկե, այն, որ նորից արյուն է հեղվում, մարդիկ լքում են իրենց հայրենի բնակավայրերը, կանայք եւ երեխաներ են զոհվում, վատ է: Մանավանդ, որ շարունակվող առճակատումը այն ուժերի կողմից, որոնք շրջապատում են ոչ միայն Ղարաբաղը, այլեւ Հայաստանը, օգտագործվում է այնպիսի ագրեսիվ քայլերի համար, ինչպիսին շրջափակումն է: Իսկ շրջափակման հետեւանքները մենք իմքներս նույնպես տեսնում ենք: Իրավիճակը շատ ծանր է: Դժվար է միանգամից այս վիճակից դուրս գալու ուղիներ մատնանշելը, բայց որոշես դիվանագետ կարող եմ ասել, որ, ըստ երեւույթին, հիմնական ճանապարհը բանակցությունների ուղին է: Իսկ իրավիճակի սրումը չի նպաստում շրջանի կայունացմանը եւ վնասում է առաջին հերթին ժողովրդին: Պետք է բանակցություններ վարել բոլոր մակարդակներով, եւ դրանցից էլ պարտադիր չէ, որպեսզի բոլոր հարցերը միանաբար բննարկվեն, որովհետեւ, չնայած կոնֆլիկտին, այնուամենայնիվ եւ Հայաստանը, եւ Ռուսաստանը, եւ հանրագործակցության մյուս երկրները թեւակոխել են զարգացման նոր փուլ, եւ այժմ անհրաժեշտ է ստեղծել իրավական նոր համակարգ, որտեղ երկրների փոխհարաբերությունները կհիմնվեն հիմնականում երկկողմանի համաձայնագրերի վրա: Պետք է բանակցություններ վարել հարցերի բավականին լայն շրջանակներում, եւ, իմ կարծիքով, ճիշտ չի լինի դրա համար սպասել գինված առճակատումների լարվածության թուլացմանը: Կոնկրետ Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ նման աշխատանքներ սկսելու համար խոչընդոտներ չեմ տեսնում:

Բազմաթիվ վկայություններ կան, որ Լեռնային Ղարաբաղի վերջին մարտական գործողություններին ռուսական բանակն ակտիվ մասնակցություն է ունեցել: Միեւնույն ժամանակ, անցյալ շաբաթ նախ պետք է արձագանք տվեցիք Հայաստանի դեմ ուղղված հարձակմանը: Տվյալ դեպքում պետք է արձագանքել: Ինչպես հայտնի է, որ 23-րդ դիվիզիայի հրամանատարը պարզապես խելագարվել է: Կամ դիվիզիայի անձնակազմն է ապրստամբել: Այլ բացատրություն չի կարող լինել: Որովհետեւ եթե ասում ենք, որ դիվիզիան մասնակցել է ռազմական գործողություններին, ապա դա նշանակում է, որ դիվիզիայի հրամանատարությունը նման հրաման է տվել, միանշանակ ակնհայտ է, որ նման հրաման չի եղել: Եւ դա հրաշալի գիտի Հայաստանի ղեկավարությունը: Այնպես որ, ընդդիմությունն իզուր է կոչահարում նրան:

Եւ ընդհանրապես, երբ խոսվում է բանակի միջամտության մասին, դա նպատակ ունի սեպ խրել Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ: Իսկ դա ձեռնտու չէ ոչ Հայաստանին, ոչ էլ Ռուսաստանին:

– Հունիսի 9-ին Մոսկվայում կայացած բրիֆինգի ժամանակ, նախքան ձեր գալը Հայաստան, դուք ասացիք, որ Ղարաբաղի հարցը պետք է լուծվի փոխզիջման ճանապարհով, եւ գերակայությունը տվեցիք ազգերի ազատ ինքնորոշման իրավունքին: Նույն բրիֆինգի ժամանակ Ադրբեջանում Ռուսաստանի դեսպան նշանակված Վալտեր Շոնիան հայտարարեց, որ առաջնությունը պետք է տրվի սահմանների անձեռնմխելիությանը: Փաստորեն լինելով նույն պետության ներկայացուցիչներ, դուք տարբեր կարծիքներ հայտնեցիք: Կարո՞ղ ենք իմանալ՝ ո՞րն է այս հարցում Ռուսաստանի պաշտոնական տեսակետը:

– Գիտեք, նախ ասեմ, որ մենք դիվանագետներս, միշտ չէ, որ պաշտոնական կարծիքներ ենք հայտնում: Երբեմն մենք միայն պաշտոնական տեսակետներ արտահայտենք, ստիպված կլինենք ամբողջ ժամանակ լռել: Ավելի հաճախ մենք մեր անձնական տեսակետներն ենք արտահայտում: Ինչ վերաբերում է Ռուսաստանի պաշտոնական տեսակետին, ապա պետք է հաշվի առնել, որ այն նոր է միայն ձեւավորվում: Վերջին հաշվով, անկախ Ռուսաստանն ընդամենը կես տարեկան է: Իսկ արտաքին քաղաքական կոնցեպցիան ձեւավորվում է նաեւ դեսպանների ու դեսպանատների ակտիվ մասնակցությամբ, որոնք նույնպես նոր են ձեւավորվում:

Իսկ սահմանների անձեռնմխելիության սկզբունքը, որի մասին խոսում է Վալտեր Շոնիան, Հելսինկյան ակտում ուղեկցվում է այն սկզբունքով, որը թույլ է տալիս խաղաղ ճանապարհով սահմանների փոփոխություն: Եւ, ի դեպ, առանց այս վերջինի նախորդն անիմաստ է: Չգիտես ինչու, սահմանների անձեռնմխելիության սկզբունքը մենք տարածում ենք միայն նախկին խորհրդային հանրապետությունների վրա: Բայց չէ՞ որ այդ նույն Խորհրդային Միությունում եղել են նաեւ ինքնավար հանրապետություններ, ինքնավար մարզեր, ազգային օկրուգներ: Սահմանների անձեռնմխելիությունը նրանց էլ է վերաբերում:

Ինչ վերաբերում է ազգերի ինքնորոշման իրավունքին, ապա դրան զուգահեռ գոյություն ունի մի սկզբունք եւս, որի մասին, չգիտես ինչու, չեն խոսում: Դա այն է, որ ոչ մի ժողովուրդ մեկ այլ ժողովրդի վրա իշխելու իրավունք չպետք է ունենա: Վերջերս Ադրբեջանի ներկայացուցիչներից մեկը հարցազրույցի ժամանակ ասել էր, որ ոչ մի անկախ պետություն չի կարող մեկ այլ անկախ պետության մաս կազմել: Մաս, իհարկե, չի կարող: Բայց կարող է գոյություն ունենալ նրա մեջ: Օրինակներ շատ կան: Սան-Մարինոն Իտալիայի մեջ է, Մոնակոն Ֆրանսիայի, Լեսոտոն Հարավ-Աֆրիկյան Հանրապետության...

– Հայ-ադրբեջանական հակամարտության ամբողջ ընթացքում Թուրքիան եւ միջազգային ասյաններում, եւ հասարակական կարծիքի ձեւավորման մեջ կանգնած է Ադրբեջանի կողքին: Թուրքիան երբեմն դա բացատրում է նրանով, թե իբր Ռուսաստանն աջակցում է Հայաստանին, եւ ինքը սոսկ ուշանում վերականգնում է ուժերի հավասարակշռությունը: Իրականում Ռուսաստանի չեզոք դիրքը հազիվ թե կարելի լինի հայանպաստ համարել, եւ Հայաստանը հայտնվում է խիստ անբարենպաստ վիճակում:

– Առայժմ, փաստ ասծո, Թուրքիան քաղաքական հայտարարություններից, այն էլ՝ ոչ միշտ բացահայտ բացասական, այն կողմ չի անցել: Թուրքական որոշ քաղաքական գործիչներ, իհարկե, փորձել են, մասնանշելով 1921 թ. Մոսկվայի կամ Կարսի պայմանագրերը, հավակնել միջամտելու նախկին Խորհրդային Անդրկովկասի գործերին: Բայց այդ պայմանագրերը ոչ մեկին նման ոչ մի իրավունք չեն տալիս: Իմ կարծիքով, Խորհրդային Ռուսաստանի եւ Քեմալական Թուրքիայի միջեւ կնքված այն պայմանագիրը, ըստ որի Նախիջեւանը նվիրվում է Ադրբեջանին, անարդարացի է: Բայց նույնիսկ այդ պայմանագրում դրանով էլ ամեն ինչ վերջանում է: Այդտեղ ոչ մեկին միջամտելու իրավունք չի տրվում: Իսկ երբ Թուրքիան, այնուամենայնիվ, ինչ-որ կերպ օգնում է Ադրբեջանին, ապա պետք է դա ասպացուցել ոչ միայն Մոսկվային,- այնտեղ կան մարդիկ, որոնք իրական վիճակը պատկերացնում են,- այլեւ ավելի շատ միջազգային հանրությանը: Չէ՞ որ դրա ԵԱՀԽ-ի անդամ եմ:

– Վերջերս Մոսկվայում կայացած Ելցին-Դեմիրել հանդիպումից եւ ռուս-թուրքական թվով 13-րդ պայմանագրի ստորագրումից հետո Ադրբեջանին կարծես թե ազատություն տրվեց: Սկսվեց լայնածավալ ագրեսիան...

– Դրանից հետո՝ չի նշանակում դրա հետեւանքով: Գուցե հարձակումը հենց այդ ժամանակ սկսելու համար ուրիշ պատճառներ կային: Օրինակ, կարծիքներ կան, որ դա կազմված էր Ադրբեջանում նոր նախագահի ընտրության հետ, կամ ադրբեջանցիները տեսան, որ հայերի զգոնությունը թուլացել է, կամ դա կազմված է ռազմական տեխնիկայի հանձնման հետ: Ես չգիտեմ: Այնուամենայնիվ, Ելցին-Դեմիրել հանդիպման եւ Ղարաբաղյան վերջին իրադարձությունների միջեւ ուղղակի կապ չեմ տեսնում: Որքան ինձ հայտնի է, Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ որեւէ գաղտնի համաձայնագիր չի ստորագրվել, մանավանդ՝ Հայաստանի դեմ:

– Մայիս ամսվա համարներից մեկում «Независимая газета» թերթը գրել էր, որ իրանա-ադրբեջանական սահմանը փաստորեն մերկ ու անվերահսկելի է: Ակնհայտ է, որ դա միայն ու միայն Ադրբեջանի օգտին է:

– Ես ծանոթ չեմ այդ խնդրին, ուստի մեկնաբանել չեմ կարող:

– Պարոն դեսպան, մի հարց եւս խիստ մտահոգում է մեզ՝ հայաստանաբնակ հայերիս: Լուրեր են ստացվում, թե Ռուսաստանում եւ մասնավորապես Կրասնոդարի երկրամասում վերջերս ուժեղացել են ծընունդները հայերի նկատմամբ: Մի քանի օր առաջ «Ինտերֆաքս» գործակալության թղթակիցը հաղորդեց, թե Կրասնոդարում տեղի է ունեցել կազակների հանրահավաք, որոնք պահանջել են վռնդել Անդրկովկասից այստեղ ապաստանած փախստականներին: Հայտնի է, որ նրանց ճնշող մեծամասնությունը հայեր են: Որպես կանոն, հայերի դեմ հնչող մեղադրանքները սոսկ ծածկոց են: Ինչո՞ւմն է բանը:

– Կարծում եմ, որ եթե այդպիսի խնդիրներ իսկապես կան, ապա դրանք պետք է լուծվեն երկու երկրների համապատասխան մարմինների համատեղ ջանքերով: Ռուսաստանում փախստականների հարցերով զբաղվող հատուկ հանձնաժողով կա, եւ դրա գոյությունն արդեն վկայում է այն մասին, որ Մոսկվայում այդ հարցերին մեծ ուշադրություն է դարձվում: Եւ, բացի այդ, ես չեմ կարծում, թե նման վերաբերմունքը միայն հայերի նկատմամբ է:

Կուզենայի նաեւ ասել, որ անձամբ ես մեծ համակրանք ունեմ հայ ժողովրդի հանդեպ եւ կցանկանայի, որպեսզի վերջապես վերականգնվեր խաղաղությունն ու հայ ժողովուրդը կարողանար ապրել բնականոն կյանքով:

■

«Դաշնակցության առաջին սխալն այն էր, որ ուշ մտավ Հայաստան»

Այսպես պատասխանեց մեր հարցին «Ազատություն» ռադիոկայանի տնօրեն, ՀՅՊ անդամ Էդուարդ Հովհաննիսյանը, ուրբաթ օրը ժուռնալիստների տանը կայացած հանդիպման ժամանակ: Նա ասաց, որ խան տարի շարունակ, հեռացած լինելով մայր հայրենիքից, անընդհատ իր ընկերներին ասել է, որ վերադառնան Հայաստան, գործունեություն ծավալեն, սակայն ապարդյուն: Իսկ Հայաստան վերադառնալուց հետո Դաշնակցության մնացած սխալները կարելի է համարել օրինաչափ: Այդ իմաստով պրն. Հովհաննիսյանը մեծ նվաճում համարեց երկու տարվա ընթացքում կուսակցության հավաքած անդամների թիվը. նախագահական ընտրություններում ձայների 4 տոկոս ստանալը, ասելով «դա էլ քիչ բան չէ»: «Ժամանակն այնքան կարճ է, որ սխալների մասին դրժվար է խոսել: Մանր բաների մասին կարելի է ասել, բայց կարդինալ սխալներ ՀՅԴ-ն չի արել», շարունակեց նա: Հարցից մի փոքր շեղվելով, պրն. Հովհաննիսյանը հայտարարեց, որ ներկա իշխանություններն իրենց ձեռքից վերցրին յոթանասուն տարի սպասելիս փայփայած նոպագույնը, մայիսի 28-ը, իսկ դաշնակցությանը մերժեցին ընդունել:

«Եթե Հայաստանը դաշնակցությանը տեղ չի տալիս, ապա ինչ-որ բան սխալ է Հայաստանում», եզրակացրեց պրն. Հովհաննիսյանը:

Պատասխանելով մեր երկրորդ հարցին, թե ի՞նչ կաներ դաշնակցությունը, եթե հիմա լիներ իշխանության գլուխ, նա պատասխանեց. «Երեք բան դաշնակցությունը կարող է խոստանալ, եթե անցնի իշխանության գլուխ.

1. Նախ կվերացնենք կաբառակերությունն ու գողությունը: Խոսք եմ տալիս, որ թեկուզ մեզ քարկոծեն, բայց մենք կվերացնենք:

2. Մենք կստեղծենք համազգային երկիր, բազմակուսակցական իսկական երկիր:

3. Ինչ էլ մենք անենք, միշտ կընտրենք ճիշտ քաղաքական կողմնորոշումը:

Քաղաքականության մեջ ազնվություն ենք խոստանում»:

Այնուհետեւ, լրագրողների հյուրը խոսեց այն մասին, որ Հայաստանում դեռեւս լավ չեն ըմբռնում, թե ինչ է նշանակում ժողովրդավարություն: Միասնության հարցում պետք է մի գաղափար, որի շուրջը համախմբվենք, թե չէ Ֆուտբոլ խաղալու կամ տուն կառուցելու համար չենք կարող միավորվել: Հայ ազգը պետք է հիշի, որ աշխարհագրական դիրքով գտնվում է Ռուսաստանի ազդեցության տակ եւ Հայաստանն իր ընտրած ճանապարհում սխալվեց ազատության եւ անկախության ըմբռնման մեջ: «Այն անկախությունը, որը եղել է առանց ազատության փուլն անցնելու, դրա վերջը ամբողջատիրությունն է», ասաց նա:

Պրն. Հովհաննիսյանն անդրադարձավ նաեւ ԱՍՍԼԱ-ի գործունեությանը. նրա նախորդ շրջանն անվանելով «հայ ժողովրդի դավաճանություն եւ խայտառակ խուլիգանություն», իսկ խոսելով արեւմտյան գործակալությունների եւ դաշնակցության կապի մասին, նշեց, որ նման կապեր այժմ չկան: «Այդ բան է, եթե Հայաստանում ՀՅԴ-ի մեջ լրտեսներ թափանցած լինեն, բայց դա էլ դժվար է որոշել», եզրափակեց նա:

Վերջում ավելացնենք, որ պրն. Հովհաննիսյանը չբացառեց իր մշտական վերադարձը Հայաստան եւ ակտիվ մասնակցությունը քաղաքական կյանքին: Ինչ վերաբերում է «Ազատություն» ռադիոկայանին, «ապա այժմ ասելու շատ բան չկա», ասաց նա:

Հ.Ս.

digitised by A.R.A.R.@

Ջուրը մի մտիր լողալ չսովորած կամ քաղաքականության խութերի արանքում

ՀՀՇ-ն եւ ընդդիմադիր յոթ կուսակցությունները առանձին-առանձին առաջ են քաշում որոշ իմաստով իրարամերժ «փոխզիջումային» եւ «պայքար Արցախի համար որպես անկախ պետություն կամ Հայաստանի մաս» ծրագրերը:

Առաջին գաղափարը շատերի կողմից չի ընդունվում, եւ դա հասկանալի է, հաշվի առնելով այն հոգեբանական կարգի գործոնները, որոնք այդ դեպքում առաջ են գալիս: Իրոք, ստացվում է քառամյա պայքարի իմաստազրկում, քանի որ դեռ Գորբաչովն էր առաջարկել նմանատիպ մի տարբերակ զումարած 400 մլն. ռուբլի, այն ժամանակ ոչ այդքան արժեզրկված: Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմում թողնելու դեպքում մտավախություն կա նաեւ, որ այն կհայաթափվի, միջազգային հանրությանն այդ մասին ամենեւին էլ տեղյակ չպահելով: Եւ երրորդ փաստարկը կայանում է նրանում, որ Ղարաբաղը ըստ երեւույթին առաջինը կլինի զիջումների շարքում:

Երկրորդ տեսանկյունը նույնպես բավականին լուրջ կասկածներ է առաջացնում: Կասկածներ կան, որ Հայաստանն նյութական եւ տեխնիկական բավարար պաշարներ չունի երկարաժամկետ պայքարի մեջ ներքաշվելու համար առանց հզոր զինակցի, իսկ տվյալ դեպքում Ռուսաստանը նշված դերը չի խաղում ի հակադրություն Իսրայել-ԱՄՆ քուրմանտ տանդեմի: Երկրորդ սոցիալ-հոգեբանական մթնոլորտը Հայաստանում չի համապատասխանում պատերազմական իրավիճակին: Երրորդ այս տարածաշրջանում, նրա հանգուցայնության պատճառով, ամեն մի տեղային այդպիսի կոնֆլիկտ հավակնություններ ունի վերածվելու համընդհանուր կոնֆլիկտի, եւ դրա բոլոր նախանշաններն այսօր առկա են: Չորրորդ փաստարկը, որ գրեթե միշտ հարցի ձեւով է ձեւակերպվում, հնչում է մոտավորապես այսպես, իսկ ո՞վ է տալիս այն երաշխիքները, որ ներքաշվելով անմիջականորեն պատերազմի մեջ Ադրբեջանի, իսկ գուցե հետագայում նաեւ Թուրքիայի հետ, Հայաստանը չի կորցնի ամեն ինչ: Հարցի գուցե ոչ այդքան բացահայտ կողմը կայանում է հետեւյալում. իսկ գուցե Ռուսաստանը մեզ նորից օգտագործում է հինգերորդ շարասյան դերում եւ մենք դատապարտված ենք պատմական սխալների կրկնության:

Հայաստանի վարչակարգը, դատելով որոշ հայտարարություններից, արդեն ըստ էության, կատարել է իր ընտրությունը: Խնդիրն այն է, որ կան ուժեր, որոնք դիմակայում են այդ ռազմավարությանը: Առաջին հերթին դա ԼՂՀ ժողովուրդն ու իշխանություններն են, երկրորդ ընդդիմությունը:

Այս պարագաներում իշխանությունները երկընտրանքի առջեւ են կանգնած կամ կնքել պայմանագիր Ադրբեջանի հետ, փաստի առաջ կանգնեցնելով բոլորին եւ արդեն, օգտագործելով հնարավոր միջոցները, ապացուցել, որ այլընտրանք չկար, կամ էլ, եթե ժամանակը դեռ ներում է, մի անգամ էլ տարբերություն ծնում գործադրելով ԼՂՀ-ի վարչակարգի վրա, փորձել նրա աջակցությունն ստանալ կիրառվող քաղաքականության հանդեպ:

Քանի որ առաջին տարբերակը հղի է սոցիալական լուրջ լարվածությամբ, ըստ երեւույթին կընտրվի երկրորդ տարբերակը: Ընդ որում, հիմնական գործոնն այստեղ ժամանակի գործոնն է: Տրամաբանական է ենթադրել, որ փոխզիջումը նոյտրալիզացիա է կնքել մինչ ձմեռ, եւ այս դեպքում ստացված զազը եւ բացված ճանապարհները ինչ-որ չափով կարող են մեղմացնել լարվածությունը. նախորդ ձմեռվա տանջալից փորձը դեռ թարմ է մարդկանց հիշողության մեջ: Բացի այդ, առանց Ղարաբաղի իշխանությունների մասնակցության փոխզիջումն ըստ էության իմաստազրկված է:

Կա երկրորդ ուղին եւս: Ոչ ոք չի կարող խոսել ժողովրդի անունից, եւ ինչքան էլ դա պարադոքսալ հնչի, ոչ ոք չգիտի, թե վերջ ի վերջո ինչ են ցանկանում սովորական մարդիկ, որովհետեւ քաղաքական քայլեր անելիս նրանց չեն էլ հարցնում, թե նպատակահարմա՞ր է, արդյոք, այս կամ այն քայլը: Բայց իրադրությունը սրվել է, եւ վրացական կամ ադրբեջանական դեպքերի կրկնությունից խուսափելու համար վերլուծողները թե այս եւ թե այն կողմից կարող են առաջարկել ուղղակի դիմել ժողովրդի կարծիքին: Ընդդիմությունն այդ դեպքում, փորձելով փոխել հանրաքվեի միջոցով հանրաքվեի քաղաքական կուրսը, կարող է պատասխանատվություն կրել այն պարզ տրամաբանությամբ, որ ժողովուրդը, այս չորս տարվա ընթացքում իր ուսերի վրա կրելով պայքարի ողջ ծանրությունը եւ զոհաբերելով լավագույններին, չի համաձայնի այդքան հեշտ հրաժարվել փայփայած իդեալներից: Հավանաբար հաշվի կառնվի նաեւ այն հանգամանքը, որ կա որոշակի թերհավատություն ներկա վարչակարգի նկատմամբ: Հակառակ կողմը հաշվի կառնի ընդհանուր հոգնածությունը, անտարբերությունը, ինքնաոհմանման բնազդը, վախը ավելի մեծ կոնֆլիկտի հանդեպ եւ հոգեբանական խորությունը Ղարաբակցական կուսակցության նկատմամբ, որը սերմանվել է նախկին վարչակարգի կողմից:

Եթե կառավարությունը եւ ընդդիմությունը չգան ընդհանուր հայտարարի, կարելի է սպասել գործերի այդպիսի ընթացքի:

Քննարկենք առաջին տարբերակի եւությունը: Խորհրդարանում Հայաստանի նախագահի հնչած ելույթից կարելի է եզրակացնել, որ փոխզիջումը զուտ դիվանագիտական քայլ է, պայմանավորված օբյեկտիվ հանգամանքներով: Եւ փոխզիջումն ամենեւին էլ չի ենթադրում պարտություն: Հակառակը, կան դրական կողմեր: Նախ, Արցախի ժողովրդի իրավունքները եւ անվտանգությունը կապահովվեն ՄԱԿ-ի խաղաղարար ուժերով, որոնք, ըստ նախագահի, երաշխիք են Ադրբեջանի կողմից սպասվող հայաթափման քաղաքականության դեմ: Երկրորդ Հայաստանն այդ քայլով չի հրաժարվում Ղարաբաղին օգնելու քաղաքականությունից, բոլոր անհրաժեշտ բնագավառներում: Շունչ քաշելով շրջափակումներից ու պատերազմից, ավելի բարյացկամ մթնոլորտ ստեղծելով քաղաքական եւ տնտեսական հարաբերությունների համար ողջ աշխարհի, մասնավորապես անմիջական հարեւանների հետ, Հայաստանը համեմատաբար կարճ ժամանակում կարող է վերականգնել իր տնտեսական պոտենցիալը, զարգացնել այն, ըստ որում որոշակի ուղղությամբ, հաշվի առնելով նույն այդ հարեւանների առկայությունը, եւ հետագայում, որոշ հանգամանքների կրկնության դեպքում ի վիճակի կլինի ավելի հաստատակամ քաղաքականություն վարելու:

Բայց... Այստեղ կա երկու հիմնական բայց: Առաջինը՝ միջազգային խաղաղարար ուժերի գալը Լեռնային Ղարաբաղի հանրաքվեություն հարցականի տակ է: Երկրորդ՝ եթե Հայաստանը գնա վերը նշված փոխզիջման, արդյոք Ադրբեջանի կողմից Հայաստանի ամեն մի միջամտությունը, առավել եւս ուղղակի օգնությունը Ղարաբաղին հետագայում կդիտվի որպես միջամտություն ինքնուրույն պետության ներքին գործերին:

Չի բացառվում նախագահի արտահայտած մտքերի նաեւ հետեւյալ մեկնաբանությունը: Արցախի հարցով ոչ մի վերջնական որոշում չի ընդունվում, այսինքն ճանաչել այն որպես առանձին պետություն եւ կնքել նրա հետ ռազմաքաղաքական դաշինք, օրակարգ չի մտցվում: Լեռնային Ղարաբաղի հանրաքվեությունը, որպես ինքնորոշված միավոր, ինքն է սնօրինում իր ճակատագիրը: Եթե որեւէ մեկը կարող է ազդել ԼՂՀ-ի իշխանությունների եւ ժողովրդի վրա փոխելու համար նրանց դիմադրությունը, դա նրա գործն է: Բայց քանի դեռ դա տեղի չի ունեցել, Հայաստանն իրեն պարտավորված է զգում աջակցել մանուկ հանրաքվեությանը միջազգային եւ այլ ասպարեզներում, ընդ որում առանց նրա հետ ռազմաքաղաքական դաշինք կնքելու, քանի որ դա կարող է հանգեցնել լուրջ բարդությունների:

Բայց սա հենց այն քաղաքականությունն է, որը վարվել է մինչ այժմ եւ չի տվել այն արդյունքները, որոնք ակնկալվում էին:

Երկրորդ տարբերակը, որը պատրաստվում է ընդդիմության կողմից, ենթադրում է Լեռնային Ղարաբաղի հանրաքվեության ճանաչում Հայաստանի կողմից եւ նրա հետ ռազմաքաղաքական դաշինքի կնքում: Դա նշանակում է պատերազմ հայտարարել հարեւան պետությանը անկանխատեսելի հետեւանքներով: Բարոյական տեսանկյունից դա, անկասկած, ողջունելի քայլ է: Բայց, ավա՜ղ, բարոյականությունն ու քաղաքականությունը ոչ համարժեք հասկացություններ են:

Նախ եւ առաջ հարկ է տեսնել, թե ինչ միջազգային պայմաններում է գործում Հայաստանը: Պետք չէ զազմավար լինել, պատգելու համար, որ փաստորեն Հայաստանը չունի հանրային դաշնակից: Ճիշտ է, այդ դատողության դեմ կարծես թե խոսում է երկու ակներեւ փաստ՝ մարտական Շաղոյանի-կովի հայտնի նախագահումը եւ պետական քարտուղար Բուրբուլիսի այցը Երեւան:

Բայց խոսքը ոչ թե Ռուսաստանում այժմ գոյություն ունեցող դիրքի, այլ նրա հնարավոր փոփոխության մասին է, հաշվի առնելով ծգնաժամային երեւույթների խորացումը այդ երկրում:

Ինչ վերաբերում է Իրանին, արդարեւ հայեցողական, ինչպես ասում են, կկվի բնի վրայով չվելու մոտեցումը պահանջում է հաշվի առնել մի քանի միլիոն ադրբեջանցիների առկայությունն այնտեղ: Եւ, բացի այդ, Իրանը դեմ է պանթուրքիզմին, սակայն, ըստ երեւույթին, ամենեւին էլ դեմ չէ պանիսլամիզմին, եւ Ադրբեջանի ճկուն քաղաքականության դեպքում այդքան միանշանակ չի դրվի Իրանի դիրքորոշման հարցը ի տարբերություն Թուրքիայի, որի դիրքորոշման մեջ ոչ մի դրական փոփոխություն սպասել իմաստ չունի:

Այսպիսով, աշխարհաքաղաքական վիճակը կարելի է անբարենպաստ որակել: Համենայնդեպս, առաջին հայացքից: Հայաստանի ներքին տնտեսական կացությունը բոլորիս հայտնի է, հազիվ թե գտնվի մեկը, որ այն ստիպիչ համարի: Ներքին քաղաքական եւ սոցիալական իրավիճակի մասին բազմիցս խոսվել է: Մասնավորապես արտահերթ նստաշրջանը ցույց տվեց, որ ընդդիմությունը միավորվել է, ստեղծել մի ընդհանուր ճակատ, որի ճնշմանը հանրաքվեության նախագահը առայժմ դիմանում է: Սակայն դա արդյո՞ք երկա՞ր կտեւի: Որքանով ՀՀՇ-ն ներկայացնող պատգամավորների թիվը նվազում է: Կգա նաեւ այն օրը, երբ օրենսդիր եւ գործադիր իշխանությունների միջեւ անջրպետը ավելի կխորանա: Իսկ հետո ի՞նչ:

Զարմանալին այն է, որ նստաշրջանում հնչած թե առաջին, թե երկրորդ տեսակետները չեն հիմնավորվում պատշաճ ձեւով: Հանրաքվեության նախագահը մեղադրում է ընդդիմությանը, թե նա չի ներկայացնում տնտեսական, աշխարհաքաղաքական, ներքին քաղաքական, ռազմական, սոցիալական եւ սոցիալ-հոգեբանական ոլորտներին վերաբերվող իր կոնկրետ հաշվարկները, որոնք կապացուցեն ընդդիմության ճշմարտացիությունը: Ընդդիմությունն առաջարկում է ջուրը նետվել առանց լողալ իմանալու: Կասկածներս լավ, չես սովորի ուրեմն ճակատագիրն էր այդպիսին:

Միեւնույն ժամանակ կառավարող վարչակարգը նույնպես ոչ մի հաշվարկներով հիմնավորված փաստարկ չի բերում հօգուտ իր քաղաքական ուղու:

ԱՐԱՄ ՅԱՎՐՈՒՄՅԱՆ
Սոցիոլոգ

ՀՀՇ-ն խզում է ՀՌԱԿ-ի հետ հարաբերությունները

Հինգշաբթի, հունիսի 25-ին, Հայոց Համազգային Շարժման վարչության նախագահ Տեր Հուսիկ քահանա Լազարյանը ՀՀՇ կենտրոնական գրասենյակ հրավիրելով Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության Հանրապետական վարչության ատենապետ Ռուբեն Միրզախանյանին, պրն. Խաչիկ Ստամբոլցյանի ներկայությամբ նրան պաշտոնապես հաղորդեց, որ ՀՀՇ վարչությունը որոշել է խզել բոլոր տեսակի հարաբերությունները Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության հետ: ՀՌԱԿ-ի ներկայացուցիչը ի գիտություն ընդունելով, խոստացավ այն փոխանցել Հանրապետական վարչություն, ինչը եւ արվեց:

Նույն օրը եւ նույն ժամին, ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ պրն. Բաբկեն Արարքցյանն իր մոտ հրավիրելով ՀՌԱԿ Հանրապետական վարչության անդամ եւ ՌԱԿ Կենտրոնական վարչության փոխանդամ Հակոբ Ավետիսյանին, հարց տվեց նրան, թե արդյոք ՀՌԱԿը փոխե՞լ է իր դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը ճանաչելու հարցի կապակցությամբ: ՀՌԱԿ-ի ներկայացուցիչը ԳԽ-ի նախագահին հայտնեց, որ ՀՌԱԿը հավատարիմ է մնացել դեռեւս այս տարվա փետրվար ամսին հրապարակված իր պլատֆորմի եւ այնուհետեւ պաշտոնական հայտարարություններում ամրագրված սկզբունքային դիրքորոշմանը, այն է՝ առանց անհապաղության որեւէ պարտադրանքի՝ ճանաչել ԼՂՀ-ի անկախությունը, ինչը եւ արտահայտվում է ՀՌԱԿ պատգամավորական խմբակցության կողմից խորհրդարանում:

Հատվածներ ՀՌԱԿ պլատֆորմի հիմնադրույթներից

Արծարծված հարցերի կապակցությամբ շահագրգիռ բոլոր կողմերի հիշողությունը թարմացնելու հույսով կողմի սյունակներում վերատպում ենք 1992 թ. հունվարին գումարված ՀՌԱԿ առաջին պատգամավորական ժողովի կողմից ընդունված կուսակցության քաղաքական պլատֆորմի հիմնադրույթներից համապատասխան հատվածներ:

◆ Հայաստանում արմատական տնտեսական վերափոխման կարեւոր նախադրյալներ են քաղաքական կայունությունը եւ քաղաքական բազմակարծությունը: Ուստի, հանդուրժելի չէ, որ պետական իշխանությունը ուղղակի նույնացվի պաշտոնատար անձերի եւ նրանց շրջապատող քաղաքական խմբավորումների հետ: Հանրապետության քաղաքական կյանքի բեւեռացումը կանխելու նպատակով, ՀՌԱԿ-ը իր գործունեությունը կառուցելու է չափավորության եւ հավասարակշռության սկզբունքների վրա: Հասարակական-քաղաքական կազմակերպությունների հետ մեր հարաբերությունները կհաստատվեն հավասարության, հանդուրժողականության, գաղափարական ընդհանրությունների դեմոկրատ համագործակցության, համազգային խնդիրների լուծման մեջ միասնաբար գործելու սկզբունքների վրա:

ՀՌԱԿ-ը հետեւողական գործունեություն կծավալի հասարակական- քաղաքական կյանքի առավել ժողովրդավարացման, անհատի իրավունքների եւ ազատությունների սահմանադրական երաշխիքների ապահովման ուղղությամբ: ՀՌԱԿ-ը իրեն իրավունք է վերապահում հանդես գալու իշխանությունների կառուցողական քննադատությամբ, ուշադրության տակ պահելու եւ գնահատելու իշխող քաղաքական խմբավորման գործունեությունը, ինչպես նաեւ այլընտրանքային տարբերակներ ներկայացնելու, քանի դեռ պետական կառույցների կողմից երաշխիքներ չեն ստեղծվել ապահովելու դատական իշխանությունների եւ պետական-վարչական մարմինների անկողմնակալ չեզոք դիրքորոշումը, որն անհնար կդարձնի իշխանության բռնատիրումը, իրավական կամայականությունները, իրավասությունների չարաշահումն ու օրինախախտումները: ՀՌԱԿ-ը միջոցներ կփնտրի ազգաբնակչության իրավական եւ սոցիալական պաշտպանության համար կառավարության վրա դրականորեն ներազդելու՝ ըստ անհրաժեշտության համապատասխան հասարակական նախաձեռնություններ գործարկելով:

◆ Քաղաքական զարգացումը հանրապետությունում թեւակոխել է մի փուլ, երբ նախկին մենաշնորհական համակարգի դեմ ծավալված համաժողովրդական շարժումը վերածել է կուսակցությունների ձեւավորման շրջանի, իսկ բազմակուսակցականությունը հիմք է հանդիսանում ռամկավարական (դեմոկրատական) քաղաքացիական հասարակության ստեղծման: Բազմակուսակցականության հաստատումը Հայաստանի քաղաքական կյանքում կհավասարակշռի քաղաքական ուժերը, կխթանի բաց, կառուցողական քննադատությունը եւ որպես արդյունք կարագացնի հասարակության քաղաքական զարգացումը:

Քաղաքական հայացքներում օրինաչափորեն գոյություն ունեցող հակասությունների լուծման արդյունավետ ձեւերից մեկը համարելով համաժողովրդական ընտրությունները, խորհրդարանական երկխոսությունը, բաց քննադատությունն ու համատարփակ վերլուծությունը, ՀՌԱԿ-ը միշտ եղել եւ պատրաստ է համագործակցելու այն բոլոր հասարակական-քաղաքական կազմակերպությունների հետ, որոնք հարգում, ընդունում եւ հետեւում են կուսակցական հանդուրժողական պայքարի սկզբունքներին ու կանոններին: Միաժամանակ ՀՌԱԿ-ը մերժում է միջկուսակցական պայքարի այն ձեւերն ու դրսեւորումները, որոնք փոխադարձ անհանդուրժողականություն են սերմանում քաղաքական ուժերի միջեւ, ինչպես նաեւ միմյանց տեսակետների քննադատությունը փոխարինում են անվայել պիտակավորումով եւ վարկաբեկումով:

Հանրապետությունում միտում է նկատվում իշխանության անհարկի անձնավորման եւ կենտրոնացման, հարգում է սահմանադրության մշակումն ու ընդունումը, լրջորեն վտանգվում են դժվար պայքարի գնով ձեռք բերված ժողովրդավարական մի շարք նվաճումներ: Այս պայմաններում հույժ կարեւոր է արագացնել սահմանադրության ընդունումը, որը կվավերացնի հասարակական համակեցության հիմնական կարգերի, կարեւոր եւ պարտադիր սկզբունքները: Դրանով իսկ կբացառվի տարբեր քաղաքական խմբավորումների նկատվող պայքարը պետության խնդիրների իրավական կարգերի եւ քաղաքական միասնության մասին իրենց տեսակետները հանրությանը պարտադրելու համար:

Համակարգելով քաղաքական միասնության ներկա պահի համար չափազանց կարեւոր ձեւավորվող գործընթացները, ընդգծելով պետական իշխանության սահմանները ու իրավասությունները եւ մասնանշելով պետական իշխանությունների վերահսկման ձեւերն ու մեթոդները, սահմանադրությունը կսահմանազատի պետական իշխանությունը եւ երաշխիքներ կստեղծի կանխարգելելու այդ իշխանության չարաշահումը:

Որեւէ քաղաքական ուժ կամ հոսանք իր գործունեությամբ պիտի չմիտադրվի պետության հետ, կամ էլ ինչ-որ ձեւով հանդես գա որպես պետական կառույց:

Ելնելով այս ամենից անհրաժեշտ են համարում՝

- Երաշխավորել մարդու իրավունքների պաշտպանությունը.
- Կենսագործել օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների փաստացի տարանջատումը նոր սահմանադրության ընդունումով.
- Վերակազմակերպել իրավապահ պաշտոնը եւ արդարադատության մարմինները:
- Իսկական ժողովրդավարություն ապահովել բազմակուսակցական հիմունքներով գործող խորհրդարանում.
- Ապահովել բազմակուսակցական համակարգի ազատ գործունեությունը հանրապետության տարածքում եւ հավասար իրավունքներ բոլոր կուսակցությունների համար գործունեության ասպարեզում եւ ընդդիմության ձեւավորման հարցում:

◆ Այսօր Արցախի հարցը հրատապ լուծում պահանջող խնդիր է: Ողջունելով իրենց իրավունքների համար պայքարող արցախցիներին, անհրաժեշտ են համարում.

- Ճանաչել ԼՂՀ-ի անկախությունը եւ նպաստել, որ այլ երկրներ եւս ճանաչեն այն ելնելով ազգերի ինքնորոշման սկզբունքից:
- Նպաստել Արցախի հարցի միջազգայնացմանը այն մշտապես պահելով մարդկային իրավունքների պաշտպանության ոլորտում.
- Շարունակել քաղաքական, նյութական, բարոյական եւ այլ անհրաժեշտ միջոցներով սատար կանգնել արցախահայության պայքարին:

digitised by A.R.A.R.@

Վրիպած գրաւը Հայաստանի հաշուոյն

ԵՐՈՒԱՆԴ ԱԶԱՏԵԱՆ

Մտորումներ ամերիկեան խաղաղութեան մասին

Յետադարձ ակնարկով մը վերջին երջանի ամերիկեան արտաքին քաղաքականութիւնը Հինգշաբաթի սուր քննադատութեանց։ Դարեր. Ռէյգանի եւ Բուշի արտաքին քաղաքականութեան վրիպումներուն համար շատ սուղ կը վճարէ այս մեծ երկիրը այսօր։ Այսպէս. «Ուոլ Սթրիթ» մեծազդեցիկ թերթի մայիս 14, 1992-ի թիւին մէջ կը կարդանք. *«Միայն Սովետական Միութիւնը չէ. որ սխալ ծիւռ վրայ դրաւ իր գրաւը Աֆղանստանի մէջ. Ուաշինկթընը եւս գործեց միեւնոյն սխալը. որուն դատճառաւ վարկաբեկող վիճակներու դիտի մատնուի յառաջիկայ ամիսներուն»։* Յօդուածագիր Ռոբըրտ Գրիգբրգր. շարունակելով իր մեկնաբանութիւնը. կաւելցնէ. *«Իսլամ ծայրայեղական Գուլբեդդին Հեքմաթեար. որ իր հրոսակային ուժերը կերտած էր առատաձեռնաբար ամերիկեան զէնքերով եւ հագուստեամբ. այսօր հանդէս կուգայ իբրեւ գլխաւոր խանգարիչը խաղաղարար այն ճիգերուն. որոնք կը փորձեն կարկտաններով իրար բերել դատերազմներու հետեւանքով կոտորուած Աֆղանստան մը. ան որոշած կը թուի ըլլալ իր տիրապետութիւնը հաստատել այս բաժանեալ երկրին վրայ»։*

Սկզբունքով ամերիկեան քաղաքականութիւնը նպատակադրած էր օժանդակել Աֆղանստանի ընդդիմադիր ուժերուն ձերբազատելու համար Աֆղանստանը սովետներու կողմէ հաստատուած ամբողջատիրական վարչակարգէն եւ երկիրը օժտելու ոամկապետական դրութեամբ մը։ Սակայն. կը դարգուի հիմա թէ Ուաշինկթընի ռազմագէտները ճամբան հարթած են նոր արիւնահեղութեանց եւ աւելի ծայրայեղական վարչակարգի մը. որ դաժան կեանքով մը կը սպառնայ աֆղան ժողովուրդին։ Այդպիսի ծայրայեղական կառավարութիւն մը միեւնոյն ատեն կրնայ անկայունութիւն յառաջացնել ամբողջ երջանին մէջ։ *«Հետեւաբար. կ'եզրակացնէ դրն. Գրինգբրգր. եթէ դրն. Հեքմաթեար յաջողի խափանել խաղաղութիւնը եւ մերժէ վերադարձնել ուսակիր հակաօդային (սթինգր) զէնքերը՝ մեղադրանքը դիտի ողղուի այս երկրի իշխանութեան»։*

Երբ Միջին Արեւելքի մէջ փոշին կը հանդարտի եւ կարելի կը դառնայ քաղաքական հորիզոնը տեսնել յստակօրէն, կը դարգուի թէ Ամերիկայի արտաքին քաղաքականութեան վրիպումները արդիւնքը չէին լոկ դատահականութիւններու, այլ կարճանգրուէին հետեւողական կերդով՝ սխալ ենթադրութեանց վրայ հիմնուած վարքագծի մը դատճառաւ. այս սխալ տուեալները կը դարգեն երջանին մասին աննեղելի տգիտութիւն մը. ինչպէս նաեւ ամբարտաւանութեան հասնող ինքնավստահութիւն մը։ Որովհետեւ ուրիշ դարագայ մըն է նաեւ Իրաքը։

«Նիւ Եորք Թայմզ»ի սիւնակագիր Ուիլեամ Սաֆայր յիշեալ թերթին մէջ կ'արտայայտուի նախագահ Բուշի արտաքին քաղաքականութեան դէմ. մանաւանդ՝ Պարսից ծոցի դատերազմը կանխող ժամանակամիջոցի մասին. *«Ամերիկացի ժողովուրդը միայն հիմա կ'անդրադառնայ. թէ Պարսից ծոցի դատերազմը հետեւանքն էր արտաքին քաղաքականութեան գայթակղալի սխալներուն»*, կ'ըսէ ան, աւելցնելով. *«Ջորջ Բուշ երջանին աղաղակութիւնը վրստահեցաւ Սադդամ Հուսէյնին»։*

Կարծէք թէ արտաքին քաղաքականութեան այդ վրիպումները բաւարար եղած չըլլային, որ այսօր ամերիկեան արտաքին քաղաքականութիւնը իր գրաւը դարձեալ կը դնէ միեւնոյն երջանէն ետիսկ սխալ ծիւռ մը վրայ. այս անգամուանն ալ Թուրքիան է. որուն քաղաքականութիւնը մեծապէս կը շահագրգռէ հայերս եւ որ կրնայ ճակատագրական նշանակութիւն ունենալ մեր հայրենիքի ապագային վրայ։

Խորհրդային Միութեան քայքայումը ասպարէզը լայն բացաւ ազդեցութեան գօտիներու մրցակցութեան դիմաց մանաւանդ միջինասիական հանրապետութեանց ծիրէն ներս։ Թէեւ գերակշռութեան ձգտող երկու մրցակից երկիրները կը թուին ըլլալ Իրանն ու Թուրքիան. սակայն քաղաքական նուազ յաջակցութիւններ չի սնուցաներ նաեւ երրջանային ուրիշ ուժ մը՝ Պակիստանը։

Կը թուի թէ Միացեալ Նահանգներու իշխանութիւնները յայտնի կերպով կողմնորոշուած են Թուրքիոյ ի նպաստ. զգուշանալով Իրանէն։ Ամերիկահայ ներկայացուցիչներու յայտնուած յատուկ ասուլիսի մը ընթացքին Սպիտակ տան քաղաքագէտները համարձակօրէն պարզեցին իրենց այս նախընտրութիւնը. սակայն, լաւ գիտնալով հայոց զգայնութիւններն ու վերապահութիւնը Թուրքիոյ նկատմամբ. անոնք աւելցուցին թէ Հայաստանի Հանրապետութիւնը եւս նկատի առնուած է ընդհանուր այդ ծրագրին մէջ եւ թէ ամերիկեան իշխանութիւնները յաջողած են համոզել Թուրքիան. որ Հայաստանը ընդգրկէ աւելի իր գործակից քան թշնամի։ Սակայն այս օրերուն Թուրքիոյ կողմէ քաջալերուած ու ծրագրուած ադրբեջանական արիւնալի դատերազմը ստուր կը թողու ամերիկեան անկեղծութեան վրայ եւ կամ աւելին՝ մերկապարանոց կերպով կը դարգէ ամերիկեան քաղաքականութիւնը նախագծող ռազմագէտներուն միամտութիւնն ու անգիտութիւնը։ Պատմութեան ծանօթ ոեւէ անձի համար դարգ կը դառնայ. թէ քրիստոնեական ամէն ծրագիր կրնայ միայն միտիլ Հայաստանի բնաջնջումին։ Հետեւաբար. ամերիկահայութիւնը իր ամբողջական ուժով դէտք է ընդդիմանայ այդպիսի կարճատես քաղաքականութեան մը։

Պարզ է թէ ամերիկացի ռազմագէտները նախատեսած են նաեւ ամերիկահայոց հակազդեցութիւնը Հայաստանի աղէտալի կործանման դարագային. որ աւելին չի կրնար ըլլալ քան մեղմ աղմուկ մը՝ քաղաքականօրէն զգայազուրկ ու բանկալատէր այս գաղութին մէջ...

Նկատի ունենալով հանդերձ հայոց վերապահութիւնները Թուրքիոյ նկատմամբ՝ Ուաշինկթընն վճռական կամ ըլլալ կը թուի իր թրքամէտ քաղաքականութեան մէջ։ Այդ որոշման զլլականութեան մէջ։ Այդ որոշման զլլականութեան մէջ։ Ուախատր տուեալը կը թուի ըլլալ Ուաշինկթընի այն համոզումը. թէ Թուրքիան իր դարաւոր կաղերով լաւագոյն դաշնակցութիւնն է Միջին Ասիոյ երկիրներուն քաղաքականութեան եւ ներքին իրականութեանց։ Սակայն. ի մի բերելով տուեալները՝ դժուար չէ եզրակացնել. թէ Ամերիկան արդէն սխալ կացնել. թէ Ամերիկան արդէն սխալ մը եւս գործելու ճամբան կը գտնուի. ճիշդ այնպէս. ինչպէս գործած էր Աֆղանստանի եւ Իրաքի մէջ։

Բացի հայոց զգուշութիւններէն՝ ամերիկեան քաղաքականութեան նախադրեալներով եւս թրքամէտ այդ քաղաքականութիւնը կը հանդիսանայ սխալ ուղեգիծ մը. որ միայն կրնայ գլխացաւ դատճառել ադրբեջանական Ուաշինկթընի ռազմագէտներուն։ Թուրքիոյ վերագրուած կարողութիւնները ցանկատեսութեան սահմանին մէջ կը մնան եւ հեռու են իրականութեան համադասելէ։ Թուրքիան միայն շահագրգռուած է իր համաթուրանական ծրագիրներով եւ ան վաղուց մերկացած է խաղաղարարի եւ միջնորդի դատերազմի մէջ։ Արցախի կեղծ դատերազմի մէջ որդեգրած իր միակողմանի կեցուածքով։

Նոյնիսկ եթէ մէկդի թողուն հայկական զգուշութիւնն ու զգայնութիւնները՝ զուտ ամերիկեան շահերէն մեկնելով իսկ համոզիչ չի դառնար թրքամիտ այս վարքագիծը։ Թրքական տիրապետութեան տարածումը Միջին Ասիոյ մէջ կրնայ միայն համաթուրանիզմի նպատակներուն ծառայել եւ ոչ անդայման՝ Ամերիկայի։ Նաեւ ցանկատեսութիւն կը մնան Թուրքիոյ ունեցած ծանօթութիւնը երջանի ազգութեանց մասին. ինչպէս անոր ենթադրական հմայքը՝ այդ աշխարհամասին մէջ։

«Նիւ Եորք Թայմզ»ի որիշ մէկ աշխատակիցը. Լեզլի Գելբ. թերթի մայիս 22-ի թիւին մէջ կը գրէ. *«Ամերիկեան իշխանութեանց համար Իրանի ծայրայեղ կրօնամոլութիւնը վտանգ մը կը նկատուի այդ երջանին մէջ Արեւմտեան շահերուն դէմ. այդ դատճառաւ ալ կ'ուզեն Թուրքիան զօրացնել իբրեւ իսլամական աշխարհիկ երկիր մը. հետեւաբար ալ չեն փափաքիր տեսնել հայոց զինուորական յաջողութիւնները թրքական ծագումով ազգութեան մը դէմ. որ Անկարան մատնուի անկարողութեան կամ փորձէ միջամտել զինու զօրութեամբ»։* Յիշեալ յօդուածին մէջ դրն. Գելբ կը խոսնդվանի նաեւ. թէ *«մինչ ամերիկեան դիւանագիտութիւնը կը փորձէ անկողմնակալ երեւիլ. սակայն զգացումները հետզհետէ հայոց դէմ կը դառնան»։*

Ամերիկեան քաղաքականութեան վտանգաւոր թերիները կարելի է ամփոփել հետեւեալ կէտերու մէջ.

ա) Թուրքիան կրնար իբրեւ աշխարհիկ երկիր օրինակ հանդիսանալ այնպիսի երկիրներու. որոնք աշխարհիկ քաղաքականութեան աւելի երկար փորձառութիւն մը ունին։

բ) Երբ հարցը գայ իսկական տիրապետութեան եւ ամերիկեան շահերը վտանգուած նկատուին Ուաշինկթընի կողմէ. Ամերիկա հարկադրուած դիտի ըլլայ իր սեփական ուժերով դատճառելու իր այդ շահերը. ինչպէս դատահեցաւ Ծոցի դատերազմին ընթացքին. երբ ՄԱԿ-ի հովանաւորութիւնը միայն թուղթի տերեւի դեր մը կը կատարէր։ Ուրեմն աւելի ձեռնտու դիտի ըլլար Ամերիկայի համար իր սեփական շահերը դատպանել իր սեփական ուժերով. քան աղաչել երրանային փոխանորդներու։

գ) Որքան ալ ցանկութիւն գործադրուի Ուաշինկթընի կողմէ Թուրքիան նպաստաւոր լոյսի տակ տեսնելու եւ այդպէս ալ ցոյց տալու. երրջանի ժողովուրդները միեւնոյն ընկալումը չունին Թուրքիոյ նկատմամբ. որ այնքան ալ բարեացակամ դիմագիծ մը չի դարգեր իր դիմացիններուն. մանաւանդ երբ ան դատերազմի ելած է իր հողամասի ազգաբնակչութեան մէկ-երրորդին դէմ։ Թուրք դեսութիւնը այսօր բդեռու դէմ նոր ցեղասպանութիւն մը կազմակերպելու վրայ է. եւ ոչ ոք կրնայ գուշակել բդական ընդարձակուած դէմ նախաձեռնուած ռազմական գործողութեանց արդիւնքը։

դ) Հակառակ Ուաշինկթընի ենթադրութեանց եւ հաւասումներուն. Թուրքիա այնքան ալ ծանօթութիւն ու կապեր չունի միջինասիական իսլամ երկիրներուն հետ։ Այդ ուղղութեամբ կարելի է վկայակոչել նոյնինքն Թուրքիոյ վարչապետ Սուլեյմանի Դեմիրելը. որ Միջին Ասիայէն իր վերադարձին. մայիս 5, 1992-ին հրապարակային ճառը արտասանելով յայտարարեց. *«Անդրադարձայ. թէ մենք ոչինչ գիտենք այդ երկիրներու մասին եւ այսօր միտքս աւելի շփոթ է. քան երբեք...»։*

ե) Միտս կողմէ. Իրանի նկատմամբ Ուաշինկթընի տածած վախերը այնքան ալ արդարացում չունին այսօր. մանաւանդ երբ Թեհրանն սկսած է դէպի Արեւմուտք հակիլ եւ արեւմտեան վերջին դատանդներու արձակումէն ետ Թեհրանի հետ դիւանագիտական կապերը վերահաստատելու որոշ նշաններ սկսան երեւան գալ։ Նախագահ Ռաֆսանջանին վերջին ընտրութիւններէն ետ աւելի զօրացած կը զգայ իր արդը եւ դատրաստ կը թուի ըլլալ Արեւմուտքի հետ տնտեսական ու քաղաքական կապերը զօրացնելու։ Նոյնպէս. հակառակ «ծայրայեղական» ըլլալու իր դիտակին. Թեհրան աւելի անաչառ մօտեցում մը ցոյց տուաւ Ադրբեջանի եւ Հայաստանի բախումին առիթով. առանց կրօնամոլութիւն ներմուծելու իր քաղաքականութեան մէջ. մինչ աւելի աշխարհիկ նկատուող Թուրքիան յարեւմտեան ուղիներ կ'ուզեր։

Հայաստանի իշխանութիւնները ցաւագին կերպով իրազեկ են այսօր. թէ Ադրբեջանի հետ զինեալ ընդհարում մը միայն աղէտ կրնայ բերել Հայաստանին։ Սակայն. հակառակ Հայաստանի դեսութեան զգուշութեան ու հեռատեսութեան. Նախիջեւանի սահմանին վրայ դաւեր կը սարքուին դատերազմի մէջ ներգրաւելով մեր երկիրը եւ Զանգեզուրէն հողային անցք մը փրցնելու Ադրբեջանին համար. հաստատելով վերջին օղակը համաթուրանական կայսերադատեսութեան ճանապարհին վրայ։

Թուրքիա եւ Ադրբեջան Արցախի տագնապը կը գունաւորեն կրօնական տուեալներով՝ իսլամական աշխարհին դիմաց զայն ներկայացնելով քրիստոնեայի եւ մահմեդականի հակամարտութիւն. այն յոյսով. որ դիտի յաջողին իսլամական աշխարհը սիրաբահիլ իրենց դասին՝ զայն հակադրելով Լեւոն Տեր-Պետրոսեանի յաջորդական երեք այցելութիւններ իսլամական երեք դեսութեանց Իրան. Սուրիա եւ Եգիպտոս. որ ան արժանացաւ բացառիկ ընդունելութեանց. ստորագրելով տընտեսական ու քաղաքական կարեւոր համաձայնագիրներ։ Հետեւաբար իսլամական այդ երկիրներու ջերմ վերաբերումը կը հաստատէ այն ճշմարտութիւնը. թէ Հայաստան հակամարտութեան մէջ չէ իսլամական աշխարհին հետ. որուն հետ ունի դատմական խորունկ յարաբերութիւններ։ Հայաստանի հակամարտութիւնը միայն Թուրքիոյ հետ է. որ կը մնայ թշնամի՝ ցեղասպանութեան անզգոյշի ծրագիր մը Հայաստանի եւ հայութեան նկատմամբ։

Հայաստան նոյնպէս փոխադարձ դատեսութեան դաշնագիր մը կնքեց միջինասիական երեք իսլամ հանրապետութեանց հետ. Ուկրաինայի եւ Ռուսիայի կողքին. ի հեռուս Թուրքիոյ եւ Ադրբեջանի։

Հետեւաբար. հայութեան եւ մասնաւորաբար ամերիկահայութեան ադատելութիւնը դէտք է դառնայ Թուրքիան անջատել ամերիկեան արտաքին քաղաքականութենէն եւ մասնաւորաբար Միջին Ասիոյ երկիրներուն համար մշակուած ուղեգիծէն։

Բարեբախտաբար միայն հայերը չեն որ կը քննադատեն Ուաշինկթընի անիրատես քաղաքականութիւնը Թուրքիոյ նկատմամբ։ Արդարեւ. բազմաթիւ ամերիկացի կոնգրեսմեններ եւ ծերակուտականներ. ի մի բերելով տեսակէտները. կը համոզուին թէ Թուրքիան չի կրնար ու դէտք չէ կատարէ միջնորդի եւ ներկայացուցիչի դերը Միջին Ասիոյ մէջ։

Վերջերս. Արիզոնա նահանգի ծերակուտական Դենիս Դի Քոնսինին Միջին Ասիա կատարած այցելութենէն ետ խստօրէն քննադատեց ամերիկեան արտաքին քաղաքականութիւնը այդ աշխարհամասին նկատմամբ. մանաւանդ խոցելի գտաւ Թուրքիոյ վստահուելիք դերը։ Ծերակուտականը համոզուած չէ. թէ Թուրքիոյ աղտինիլը աղտոտ միջոց մըն է զսպելու համար իսլամ ծայրայեղականութեան ծաւալող վտանգը։ Ուաշինկթընն թեքնիք համաձայնագիր մը կնքած է Թուրքիոյ հետ ռուկայի ժողովրդավարական բարեփոխումներ իրագործելու եւ այդ աշխարհամասին առեւտուրը ուղղելու դէպի Արեւմուտք։ Թուրքիա հսկայական խնդիրներ կը դիմագրաւէ. մանաւանդ մարդկային իրաւանց իր բռնաբարումին մէջ. ասելոյն Դի Քոնսինի. «Նիւ Եորք Թայմզ»ի ընծայուած մայիս 31-ի իր հարցազրոյցին մէջ։

Միեւնոյն երջանի մասնագէտները հոս կը դատասխանեն յիշեալ ծերակուտականին տեսակէտները։ Կոլումբիա համալսարանի Միջին Ասիոյ ուսումնասիրութեանց նուիրուած Կեդրոնի տնօրէնը Բարնէթ Ռուբին կը հաստատէ. թէ Միջին Ասիոյ մէջ իմաստուն քաղաքականութիւն մը որդեգրելու դժուարութիւնը սառը դատերազմի չափանիշներով մտածելն է. այսինքն գտնել բնամի մը եւ անոր դիմաց դատասխանելու համար ստեղծել գործակիցներ. միայն եսէն անդրադառնալու. որ այդ գործակիցը միայն իր սեփական շահերը հետապնդելու ծրագրի մը կը հետեւի. բոլորովին անտես առնելով Ամերիկայի շահերը։

Թուրքիոյ դարագային գործակիցի ծրագիրը դարեր է վեր երազուած համաթուրանական քաղաքականութիւնն է։

«Այս դատճառով. կ'եզրակացնէ Ռուբին. սպասելիքը Իրանի ծայրայեղ կրօնամոլութիւնը կը նկատուի. եւ անոր հակադրուելու մեր ճիգին մէջ իբրեւ դաշնակից գտած ենք Թուրքիան։ Սակայն միջինասիական հանրապետութիւնները կրաւորական ստացողներ դիտի չհանդիսանան այդ տիպարին»։

Իր կարգին. դարձեալ Կոլումբիա համալսարանի կեդրոնէն Էդուարդ Օլուրթի կ'ըսէ. թէ Թուրքիան իբրեւ օրինակելի տիպար ներկայացնել դարգամիտ քաղաքականութիւն մըն է։

Այս բոլոր քննադատութիւնները կուգան հաստատելու թէ Միջին Ասիոյ քաղաքականութեան մասին հեռատես աւելի առարկայական գնահատում մը կը յառաջանայ Ամերիկայի մէջ եւ Ուաշինկթընն որքան հեռաւորութիւն դահէ Թուրքիայէն. այնքան աւելի լայն հորիզոն մը դիտի դարգուի իր դիմաց. աւելի ներդաշնակ եւ ճշմարտութեան մօտիկ քաղաքականութիւն մը մշակելու։

Թրքական ազդակի գանգումը Ամերիկայի արտաքին քաղաքականութեան մէջ ոչ միայն բարիք մը դիտի ըլլայ Հայաստանին. այլ մանաւանդ բարիք մը դիտի հանդիսանայ նոյնինքն Ամերիկայի։

Հետեւաբար. Աֆղանստանի եւ Իրաքի սխալները կրնան ծառայել իբրեւ դաստիարակիչ նախընթացներ նման սխալներէ խուսափելու։

Ամերիկեան քաղաքականութեան աղա-թուրքականացումը բարիք մը դիտի ըլլայ հայութեան. ինչպէս նաեւ Միջին Ասիոյ ժողովուրդներուն։ Քաղաքական հեռատեսութեամբ եւ իմաստութեամբ ալ արդէն կարելի չէ որիշ եզրակացութեանց յանգիլ։

Ընտրական այս տարուան ընթացքին Ուաշինկթընն եւ այլ վերընտրելի քաղաքագէտներ. երբ այնքան դատրաստ են լսելու հոգեբանական յարմար դահը կ'ընծայուի մեզի հետապնդելու եւ յաջողցնելու այդ քաղաքականութիւնը յօգուտ Հայաստանի եւ յօգուտ Ամերիկայի։

digitised by A.R.A.R.@

Սեւծովյան հանդիպումը Հայաստանի կողմից արված երկրորդ կարեւորագույն քայլ

Հունիսի 25-ին Սամսունում 11 երկրների մասնակցությամբ գումարվեց Սեւծովյան երկրների տնտեսական համագործակցության խորհրդաժողովը: Ներուժական ելույթներից հետո մասնակից երկրների բարձրաստիճան ղեկավարները հանդիսավոր ոգեւորությամբ ստորագրեցին Սեւծովյան երկրների տնտեսական համագործակցության հռչակագիրը: Այսպիսով, կյանքի կոչվեց ուրջ երկու տարի առաջ Թուրքիայի նախաձեռնած ծրագիրը: Հիշեցնեմ կարգով նշենք, որ նախաձեռնության հեղինակը նախագահ Թուրգուտ Օզալն է:

Հռչակագրի ստորագրումից հետո կազմակերպվեց մամուլի ասուլիս, որին մասնակցեցին Սեւծովյան համագործակցության երկրների պատվիրակությունների ղեկավարները: Խորհրդաժողովի ծրագիրը բավականին ընդարկուն էր: Աբխազներին զուգահեռ Սամսունում տեղի ունեցան երկկողմանի կամ բազմակողմանի հանդիպումներ, միաժամանակ վարչապետ Սուլեյման Դեմիրելն ընդունեց պատվիրակությունների ղեկավարներին: Հանդիպումներում քննարկվեցին բազմաթիվ խնդիրներ՝ կապված թուրք-հունական, Պրիդնեստրովյան, Հարավային Օսիայի եւ Ղարաբաղյան հակամարտության խնդիրների հետ: Այդ ամենի մասին մենք տեղեկացել ենք թուրքական հեռուստատեսության հունիսի 25-ի հաղորդումներից: Առաջին տպավորությունն այն է, որ Սամսունի խորհրդաժողովում տնտեսական համագործակցության որեւէ կոնկրետ առաջարկ չի արվել: Եւ պատահական չէ, որ Սեւծովյան երկրների տնտեսական համագործակցության միջազգային խորհրդաժողովում քաղաքական բնույթի աշխատանքը գերազանցեցին տնտեսականին: Առաջնորդ հակամարտ կողմերին նույն սեղանի շուրջ հավաքելն ու նրանց տնտեսական համագործակցությանը մասնակից դարձնելը նշվեց որպես կարեւորագույն ձեռքբերում: Փաստորեն, այդ համագործակցությունն Ասիայի եւ Եւրոպայի միջեւ կամրջի դեր է կատարելու: Նման գնահատականի համար հիմք են ծառայում ինչպես ներուժական ելույթները ու մամուլի ասուլիսը, այնպես էլ երկկողմանի հանդիպումները: Մեզ, անշուշտ, առաջին հերթին հետաքրքրում են այն ելույթները, որոնք ուղղակի կամ անուղղակիորեն առնչվում են Հայաստանին ու Ղարաբաղյան խնդրին:

Թուրքական հեռուստատեսություն, հունիսի 25:- Խորհրդաժողովում հանդես գալով, Սուլեյման Դեմիրելը մասնավորապես ասաց. *«Սեւծովյան երկրների տնտեսական համագործակցությունը կարեւոր նշանակություն ունի Թուրքիայի համար եւ պատահական չէ, որ դա ընդգրկված է կառավարության ծրագրի մեջ: Գոհունակությամբ պետք է նշել այն լիարժեք փոխըմբռնման մասին, որ հռչակագրի հարցում կայացավ մասնակից երկրների միջեւ»:*

Ալբանիայի նախագահի ելույթից հետո ներածական խոսքով հանդես եկավ ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը: Նա նշեց, որ Հայաստանի մասնակցությունը Սեւծովյան երկրների համագործակցությանը անկախության հռչակումից հետո նրա կողմից արված կարեւորագույն երկրորդ քայլն է: *«Սարդու իրավունքներն ու Հելսինկյան եզրափակիչ ակտի դրույթները,* ասաց Տեր-Պետրոսյանը, *ընկած են համագործակցության հիմքում: Հուսով եմ, որ այս նախաձեռնությունը պատմական նշանակություն կունենա»:* Նա կոչեց ուրջանի երկրների եւ հարեւանների հետ հարաբերությունները զարգացնելու Հայաստանի ցանկությունը:

Իր ելույթում Արուլֆազ Էլչիբեյը հույս հայտնեց, որ համագործակցությանը կարեւոր նշանակություն կտրվեն Ադրբեջանի աղագայի համար: Այնուհետեւ նա նշեց միջազգային իրավունքի ուրջանակներում ստորագրած հանձնաժողովներից քիչ բոլոր պարտավորությունները հարգելու Ադրբեջանի պատրաստակամության մասին: Բուլղարիայի նախագահից հետո ամբիոնին մոտեցավ Էդուարդ Շեւարդնաձեն: Նա ներկաների ուշադրությունը հրավիրեց ուրջանում հետզհետե սպառնալից բնույթ ստացող ընդհարումների վրա եւ կոչ արեց դրանք կանխելու համար գործուն դիվանագիտական քայլեր ձեռնարկել, միաժամանակ ընդգծելով ուրջանում «երաշխիքների համակարգի» ստեղծման անհրաժեշտությունը:

Հռչակագրի ստորագրումից հետո կազմակերպված մամուլի ասուլիսում մասնակից երկրների ղեկավարները պատասխանեցին ուրջանային կոնֆլիկտների եւ երկկողմանի հարաբերությունների վերաբերյալ լրագրողների հարցերին: Պատասխանելով այն հարցին, թե Սեւծովյան երկրների համագործակցությունն իր հաջողություններով կարող է գերազանցել ԱՊՀ-ին, Բորիս Ելցինն ասաց. *«Թեեւ երկուսն էլ համագործակցություն են կոչվում, սակայն բնույթով էապես տարբերվում են: Ռուսաստանն ամեն գնով պատրաստ է կատարել ստանձնած պարտավորությունները: Այն բարի կամքը, որ ցուցաբերում են մասնակից երկրները ուրջանում արյունահեղությունը կանխելու համար, հիմք է տալիս ենթադրելու, թե Սեւծովյան համագործակցությունը կունենա ոչ միայն տնտեսական, այլեւ քաղաքական կարեւոր նշանակություն»:*

Լրագրողները կողմերին նախ հիշեցրին հայ-ադրբեջանական առճակատման մասին, ապա դիմեցին Հայաստանի ու Ադրբեջանի նախագահներին հետեւյալ հարցով. *«Հայ-ադրբեջանական առճակատման պայմաններում Սեւծովյան համագործակցությունը հաջողության ի՞նչ հնարավորություններ ունի»:* Պատասխանելով հարցին, Տեր-Պետրոսյանն ասաց. *«Համագործակցության հռչակագրի ստորագրումը ճիշտ ժամանակին կատարվեց: Միջազգային պարտավորությունների ստանձնումը հակամարտ կողմերին մղում է կոնֆլիկտների լուծման որոնումների»:* Իսկ Էլչիբեյը նշեց. *«Մենք կոնֆլիկտի լուծումը տեսնում ենք ԵԱՀԽ-ի որոնումների ու սկզբունքների շրջանակներում: Ցանկանում ենք, որպեսզի Սեւծովյան համագործակցության մասնակից պետությունները, ստորագրելով այն, գիտակցեն իրենց պարտավորությունները»:* Նրանց միացավ նաեւ Սուլեյման Դեմիրելը, ասելով. *«Եթե հակամարտ կողմերը կարողացել են նույն սեղանի շուրջ նստել, ապա կարելի է վստահել, որ Սեւծովյան երկրների հռչակագիրը կնպաստի ոչ միայն մասնակից երկրների տնտեսական համագործակցությանը, այլ դրանց միջեւ առկա կոնֆլիկտների հաղթահարմանը: Թերեւս աշխարհում գենի ուժով պարտադրված ոչ մի լուծում հարատեւ լինել չի կարող: Եթե առկա են խնդիրներ, ապա դրանց լուծումը պետք է որոնել բանակցությունների սեղանի շուրջ: Կոնֆլիկտները համագործակցության համար խոչընդոտ չպետք է հանդիսանան: Կարծում ենք, այս մոտեցումը հետագա համագործակցության համար հիմք կծառայի»:*

Երկկողմանի հանդիպումներ

Թուրքական հեռուստատեսություն, հունիսի 25:- Վարչապետ Սուլեյման Դեմիրելը հանդիպումներ ունեցավ Սեւծովյան համագործակցության երկրների ղեկավարների հետ: Ընդունելով Էլչիբեյին, նա իր գոհունակությունը հայտնեց Ադրբեջանում կայացած նախագահական ընտրությունների արդյունքների եւ Ադրբեջանում ժողովրդավարական կարգերի անցման առթիվ: Վարչապետի մամուլի ծառայություններից ստացված տեղեկությունների համաձայն, հունիսի 26-ին Էլչիբեյը պետք է մեկներ Անկարա, որ նա Սուլեյման Դեմիրելի եւ Թուրքիայի բարձրաստիճան այլ ղեկավարների հետ հանգամանալից նոր հանդիպումներ կունենա:

Դեմիրել-Ելցին հանդիպման ժամանակ Ռուսաստանի նախագահը Անդրկովկասում հավասարակշռված քաղաքականություն վարելու եւ իր քայլերով կոնֆլիկտի լուծմանը նպաստելու համար շնորհակալություն հայտնեց Թուրքիային: Նախագահ Ելցինը զուգահեռներ անցկացնելով հայ-ադրբեջանական կոնֆլիկտի եւ Մոլդովայում ու Վրաստանում ծայր առած հակամարտությունների միջեւ, նշեց, որ դրանք միմյանց նման են եւ դրանց լուծումը հնարավոր է կոնֆլիկտի շրջանի բնակչությանը ինքնավարություն տրամադրելու միջոցով:

Դեմիրելը հանդիպում ունեցավ ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ: Քննարկման նյութը Ղարաբաղի կոնֆլիկտն էր: Ինչպես հայտնում են վարչապետի մամուլի ծառայությունից, Դեմիրելը ՀՀ նախագահին տեղեկացրեց, որ Թուրքիան ցանկանում է այսուհետեւ եւս ղարաբաղյան հարցում հավասարակշռված քաղաքականություն վարել: Սակայն դրա համար անհրաժեշտ է, որպեսզի Հայաստանը դիմի համաղասխան որոշակի քայլերի: *«Շուշին ու Լաչինը ազատելու դեպքում,* ասել է Դեմիրելը, *կոնֆլիկտի խաղաղ կարգավորման հնարավորությունները զգալիորեն կընդլայնվեն»:* Ենթադրվում է, որ նախկին Ղարաբաղյան հարցին նվիրված Հռոմի առաջիկա խորհրդակցությունն ու Մինսկի խորհրդաժողովը կոնֆլիկտի խաղաղ կարգավորման ուղղությամբ Թուրքիայի ու Հայաստանի կողմից արվեն որոշակի քայլեր:

Հանդիպումից հետո Լեւոն Տեր-Պետրոսյանը պատասխանեց թուրքական հեռուստատեսության հարցերին, նշեց, որ այն անցել է բարյացակամ մթնոլորտում: Իսկ այն հարցին, թե ինքն ինչպես է գնահատում երկկողմանի հանդիպման համար Էլչիբեյի կողմից օրակարգը ճշտելու, բանակցությունները նախ պատվիրակությունների մակարդակներով սկսելու նախադրյալները, ասաց. *«Դա Էլչիբեյի խնդիրն է»:*

Պատրաստեց ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆԸ

Քաղաքական կուրսը չի փոխվի

Ըստ երեւույթին, Իսրայելի խորհրդարանի ընտրությունների արդյունքները չեն անդրադառնա Ռուսաստանի եւ Իսրայելի փոխհարաբերությունների վրա: Այդպիսի կարծիք արտահայտեց Ռուսաստանի արտաքին քաղաքական գերատեսչության փորձագետը: Ինչպես հայտնի է, ընտրություններում հաղթանակ է տարել ընդդիմադիր «Ավոդա» աշխատանքային կուսակցությունը: Փորձագետը նշեց այդ հարաբերությունների «առաջընթաց բնույթը», որոնք վերջին տարվա ընթացքում «լավ մեկնարկ են վերցրել»: Դիվանագետը հույս հայտնեց, որ ընտրություններով պայմանավորված ընդմիջումից հետո Մեծավոր Արեւելքի կարգավորման գործընթացը «էլ ավելի ակտիվորեն» կընթանա եւ «էլ ավելի արդյունավետ» կլինի: ■

Ազգային միավորումները բողոքում են

Տաջիկստանի ազգային միավորումների կոորդինացնող խորհուրդը հայտարարեց, որ նոր սահմանադրության նախագիծը հավի չի առնում հանրապետության ազգային փոքրամասնությունների շահերը: Հայկական, վրացական, հրեական, գերմանական, կորեական, օսական, ռուսական, թաթար-բաշկիրյան, ուզբեկական եւ ույգուրական համայնքների ղեկավարների կողմից ստորագրված հայտարարության մեջ նշվում է, որ անքույլատրելի է հաստատել մեկ ժողովրդի արտոնյալ դրությունը այլ ժողովուրդների նկատմամբ: Խորհուրդը հանդես եկավ այն կետի դեմ, որը նախագահի եւ փոխնախագահի պաշտոնը զբաղեցնելու իրավունքը վերապահում է միայն տաջիկներին, եւ առաջարկեց մտցնել երկաղաքացիություն, որի Ազգությունների պալատում ներկայացված կլինեն ազգային փոքրամասնություններ, ինչպես նաեւ ճանաչել ուզբեկերենը եւ ռուսերենը պաշտոնական հիմնարկների աշխատանքային լեզուներ, քանի որ հանրապետության ավելի քան 40 տոկոսը առօրյա կյանքում օգտագործում է ռուսերենը: ■

Սահմանափակվել է Ռուսաստանի բանակի թվաքանակը

Հունիսի 25-ի երեկոյան Ռուսաստանի խորհրդարանի պատգամավորները երկրորդ ընթերցմամբ քննարկեցին պաշտպանության մասին օրենքի նախագիծը եւ հաստատեցին խաղաղ ժամանակ Ռուսաստանի զինված ուժերի թվաքանակի մասին օրենքի դրույթը: Այսուհետեւ այն չի կարող գերազանցել հանրապետության բնակչության ընդհանուր թվի 1 տոկոսը: Դա նշանակում է, որ Ռուսաստանի բանակում պետք է լինի ոչ ավելի, քան 1,5 միլիոն մարդ, այնինչ ներկա պահին ծառայում են 2,6 միլիոնը: Մինչդեռ, հունիսի 26-ին հրապարակվեց Ռուսաստանի պաշտպանության նախարար Պավել Գրաչովի հայտարարությունը: Ռուսաստանյան Ֆեդերացիայի զինված ուժերին ուղղված փաստաթղթում նշվում է, որ «ժողովրդավարական Ռուսաստանը պետք է ունենա արագաշարժ, լավ հանդերձավորված բանակ, որն ի վիճակի կլինի ջախջախիչ հակահարված տալ ցանկացած հարձակման»: Պ. Գրաչովը սպաներին կոչ արեց պահպանել հավատարմությունը Ռուսաստանի սահմանադրությանը եւ օրենքներին, որ վճռական քայլեր են ձեռնարկվում սպայական կազմի իրավական եւ սոցիալական պաշտպանվածությունը ապահովելու համար: ■

Գազամուղի փակումը վնասում է Թուրքմենստանին

Ինչպես հայտնի է, անցյալ շաբաթ Ռուսաստանը փակել է Դաղստանի եւ Ադրբեջանի տարածով Վրաստան մտնող գազամուղը: Այդ պատճառով Թուրքմենստանը օրական կորցնում է մոտ 9 միլիոն ռուբլի: «Թուրքմենգազարդ» կորպորացիայի փոխնախագահ Մուրադ Պերլիեւի խոսքերով, մինչեւ հունիսի 21-ը այդ գազամուղով օրական Վրաստան էր առաքվում 10 միլիոն խմ գազ: Թուրքմենստանը պետք է մատակարարեր 5,2 միլիարդ խմ գազ, սակայն հունիսի 20-ի դրությամբ մատակարարվել էր 2,5 միլիարդ խմ գազ: ■

«Թուրքիան չպետք է միջամտի Նախիջեւանի իրադարձություններին»

«Ազգ»-ի նախորդ համարներից ընթերցողին հայտնի է դարձել վարչապետ Սուլեյման Դեմիրելի եւ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի միջեւ Ռիո դե Ժանեյրոյում կայացած հանդիպման մասին: «Հյուրրիյեթ»-ի քաղաքական մեկնաբան Էրթուղրուլ Օզքոքը թերթի հունիսի 20-ի համարում մի անգամ եւս անդրադառնում է այդ հանդիպմանը, արտահայտելով այն միտքը, թե Թուրքիան չպետք է միջամտի Նախիջեւանի իրադարձություններին: Օզքոքի հոդվածը զուսպ է ոճի չափավորության տեսակետից: Այն մասնակի կրճատումներով ներկայացնում ենք ձեր ուշադրությանը: Հ. Հ.

«Հյուրրիյեթ», հունիսի 20:- Փակ դռների ետեւում Թուրքիային խոստումներ են տալիս: Սրանք Թուրքիայի արտաքին քաղաքականության համար կարեւոր խոստումներ են: Այն հարցին, թե դրանք ինչքանո՞վ կկատարվեն, դժվար է ասել: Սակայն մի բան պարզ է, որ այդ խոստումները մեծապես ազդելու են շրջանում երկկողմանի հարաբերությունների ընթացքի վրա: Խոստումներից մեկը Լեւոն Տեր-Պետրոսյանին է պատկանում: Վարչապետ Սուլեյման Դեմիրելը արտգործնախարար Հիքմեթ Չեթինի հետ միասին Ռիո դե Ժանեյրոյում հանդիպում է ունենում Հայաստանի Հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ: Հանդիպումն անցնում է ջերմ մթնոլորտում: Հենց այդ մթնոլորտի շնորհիվ է, որ կողմերի միջեւ փակ դռների ետեւում կայացած երկխոսությունն արտացոլվում է մամուլում: Տեր-Պետրոսյանը թուրք ղեկավարների վրա լավ տպավորություն է թողնում: Վարչապետ Դեմիրելի զրույցը նրա հետ մտերմին բնույթ է ստանում եւ դիվանագիտության նորմերը հաղթահարվում են:

Հանդիպման ընթացքում Տեր-Պետրոսյանը Թուրքիայի համար բավականին կարեւոր խոսքեր է ասում: Երբ Դեմիրելն ու Չեթինը խոսք են բացում Նախիջեւանից, արտահայտելով այն միտքը, թե Թուրքիան Նախիջեւանի հարցում չափազանց զգայուն է, Պետրոսյանն իր հերթին նշում է, «Մենք Նախիջեւանի վրա չենք հարձակվի»:

Տեր-Պետրոսյանի խոսքերը չափազանց մեծ կարեւորություն ունի, որովհետեւ Անդրկովկասում առաջին հերթին Նախիջեւանն է, որ Թուրքիային գլխաբաց է կապում Հայաստանի կողմից ուղղակի հարձակման կամ Ղարաբաղի օրինակով նված դեպքում անտարբերության ցուցաբերումը Թուրքիայի համար չափազանց դժվար կլինի: Թուրքիան իր որդեգրած Անդրկովկասյան քաղաքականության շնորհիվ աշխարհին ապացուցեց, որ նախապատվությունը խաղաղությանն է տալիս: Խաղաղասեր այս նկարագրի պահպանման համար անհրաժեշտ է, որ նա չներգրավվի Նախիջեւանի շուրջ ծավալվող իրադարձությունների մեջ:

Բազում խնդիրների մեջ խճճված մեր շրջանում «դիվանագիտական վալսը» ամբողջ թափով շարունակվում է: Կողմերը միմյանց խոստումներ են տալիս, նույնիսկ փաստաթղթեր են ստորագրում: Բայց եւ այնպես կոնֆլիկտներն անվերջ շարունակվում են: Շրջանում խաղաղության հաստատման համար անհրաժեշտ է, որպեսզի այդ խոստումները իրագործվեն: Մինչդեռ, մեզ մոտ պետությունները միմյանց համար շարունակում են մնալ որպես «անվստահելի» հարեւաններ: ■

digitised by A.R.A.R.@

Հայաստանի շախմատիստների օլիմպիական փայլուն նորամուտը

Ֆլորենսիո Կամոմանեսի ուղերձը Լեւոն Տեր-Պետրոսյանին



ՌԱՖԱԵԼ ՎԱՀԱՆՅԱՆ. Ծնվել է 1951 թ., հոկտեմբերի 15-ին: Միջազգային գրոսմայստր՝ 1971թ.: 1984 եւ 1986 թթ. համաշխարհային օլիմպիադաների չեմպիոն: ԽՍՀՄ չեմպիոն: Եւրոպայի թիմային առաջնության եւ միջազգային բազմաթիվ մրցաշարերի հաղթող:

ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱԿՈԲՅԱՆ. Ծնվել է 1971 թ., դեկտեմբերի 7-ին: Միջազգային գրոսմայստր՝ 1990 թ.: Պատանիների աշխարհի եռակի չեմպիոն: Միջազգային բազմաթիվ մրցաշարերի հաղթող:

ՍՍԲԱՏԼՈՒՏՅԱՆ. Ծնվել է 1958 թ. փետրվարի 14-ին: Միջազգային գրոսմայստր՝ 1984 թ.: ԽՍՀՄ երիտասարդ վարպետների չեմպիոն՝ 1982 թ.: ԽՍՀՄ 1-ին լիգայի հաղթող՝ 1986 թ.: Միջազգային բազմաթիվ մրցաշարերի հաղթող: Սպարտակիադայի 2-րդ մրցանակակիր:

ԱՐՏԱՇԵՍ ՄԻՆԱՍՅԱՆ. Ծնվել է 1967 թ. հունվարի 21-ին: Միջազգային գրոսմայստր՝ 1992 թ.: ԽՍՀՄ վերջին չեմպիոն: Սպարտակիադայի 2-րդ մրցանակակիր:

ԱՐՇԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ. Ծնվել է 1953 թ. դեկտեմբերի 16-ին: Միջազգային գրոսմայստր՝ 1984 թ.: Միջազգային բազմաթիվ մրցաշարերի հաղթող: Սպարտակիադայի 2-րդ մրցանակակիր:



ՍԵՌՈ ԱՆԱՍՏԱՍՅԱՆ. Ծնվել է 1964 թ. հուլիսի 16-ին: Միջազգային վարպետ՝ 1988 թ.: Անդրկովկասի եւ Հայաստանի բազմակի չեմպիոն: Միջազգային մրցաշարերի մրցանակակիր:

Գագիկ Հովհաննիսյանի վերջին ռեպորտաժը Մանիլայից

Ինչպես հայտնի է վերջին տարիներս Հայաստանի եւ Ուզբեկստանի ներկայացուցիչները «կարճ փոխանցում» կատարեցին: Ինչ խոսք, ցավալի է ամենավերջին պահին ձեռից բաց թողնել «արծաթ»ը: Այնուամենայնիվ նվաճումն աննախադեպ է, իսկապես մարզական սխրանք: Չպետք է մոռանալ, որ շախմատի համաշխարհային փառատոնին մասնակցում էին ուղիղ 100 պետությունների հավաքականներ: Բրոնզե մեդալներից բացի, մեր ներկայացուցիչները միակն էին, որ պարտության մատնեցին օլիմպիական չեմպոնին՝ Ռուսաստանի հավաքականին: Արժե արտագին շնորհավորել Հայաստանի հավաքականի անդամներին Ռաֆայել Վահանյանին, Վլադիմիր Հակոբյանին, Սրբազան Լոռեցյանին, Արտաշես Մինասյանին, Արշակ Պետրոսյանին, Ասոս Անաստասյանին, մարզիչներին, կազմակերպիչներին, հանդուրժողության բոլոր շախմատասերներին:

Օլիմպիադայում կատակում էին, որ բոլորը գործ ունեն ոչ թե Ուզբեկստանի, այլ Ռուսաստանի երկրորդ հավաքականի հետ, քանի որ այս թիմի կազմում չէր խաղում ազգությամբ ուզբեկ ոչ մի շախմատիստ:

Առաջին խաղատախտակի վրա լավագույն արդյունքը ցույց տվեց Կասպարովը՝ 8,5 (10): Աշխարհի չեմպիոնն ուժեղագույնն էր նաեւ ոչ պաշտոնական ընդհանուր անհատական հաշվարկում (այստեղ հաշվի առնվեց մրցակիցների ուժը): 40 լավագույնների մեջ կան նաեւ Հայաստանի երեք ներկայացուցիչներ՝ Հակոբյանը, Լոռեցյանը, Վահանյանը:

Հայաստանի հավաքականը իրավունք ստացավ մյուս տարի մասնակցել Լյուցերնում կայանալիք աշխարհի թիմային առաջնությանը:

Կանանց մրցաշարում մեր շախմատիստուհիները բաժանեցին 28-35-րդ տեղերը (գործակիցների ցուցանիշներով՝ 32-րդ):

Պարադոքսն այն է, որ չեմպիոնի կոչումը նվաճած Վրաստանի հավաքականը դեռ ՖԻԴԵ-ի անդամ չէ: Առաջին խաղատախտակի վրա, ինչպես եւ ընդհանուր անհատական հաշվարկում լավագույնը Չիբուրդանիձեն է:

Մանիլայում ավարտված ՖԻԴԵ-ի կոնգրեսի երջանակներում եւրոպական 5-րդ փնջի փոխնախագահ եւ 5 թ ենթափնջի նախագահ ընտրվեց Հայաստանի շախմատի Ֆեդերացիայի նախագահ Լորիս Քալաջյանը: Նախատեսված է, որ եկող տարվա հունվարին կանցկացվի աշխարհի առաջնության փնջային մրցաշար՝ Հայաստանի եւ Վրաստանի շախմատիստների մասնակցությամբ: Իսկ մինչ այդ շախմատիստներին սպասում է նոր պատասխանատու քննություն. Հունգարիայի Դեբրեցեն քաղաքում կընթանա Եւրոպայի թիմային առաջնությունը: Ասենք, որ շախմատիստներն ընդհանրապես արձակուրդ չունեն: Լոռեցյանը եւ Պետրոսյանը դեռ օլիմպիադայի փակման հանդիսավոր արարողության ժամանակ մեկնեցին օդանավակայան այնտեղից Չինաստան ուղեւորվելու եւ միջազգային մրցաշարի մասնակցելու համար:

ՖԻԴԵ-ի նախագահ Ֆլորենսիո Կամոմանեսը հատուկ ուղերձ է հղել Հայաստանի Հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին, որտեղ շնորհավորելով Հայաստանի շախմատային նվաճումները, հատուկ նշում է այն էական դերը, որ մեր երկիրն արդեն խաղում է շախմատի միջազգային կազմակերպությունում:

Ահա օլիմպիադայում աչքի ընկած հավաքականների վերջնական արդյունքները՝

Տղամարդիկ

1. Ռուսաստան 39
2. Ուզբեկստան 35
3. Հայաստան 34,5
4. ԱՄՆ 34
5. Լատվիա 33,5
6. Իսլանդիա 33,5
7. Խորվաթիա 33,5
8. Վրաստան 33
9. Ուկրաինա 33
10. Անգլիա 33

Կանայք

1. Վրաստան 30,5
2. Ուկրաինա 29
3. Չինաստան 28,5
4. Հունգարիա 26,5
5. Ռուսաստան 26:

Հայաստանի հավաքականների եւ խաղացողների տեխնիկական ցուցանիշները

Տղամարդկանց	Խ	Հ	Ո	Պ	Մ
հավաքական	56	22	25	9	34,5
Վահանյան	12	1	10	1	6
Հակոբյան	12	5	6	1	8
Լոռեցյան	14	9	4	1	11
Մինասյան	12	6	3	3	7,5
Պետրոսյան	3	0	2	1	1
Անաստասյան	3	1	0	2	1

Կանանց	Խ	Հ	Ո	Պ	Մ
հավաքական	42	16	11	15	21,5
Ասլանյան	12	4	5	3	6,5
Խալաֆյան	9	1	2	6	2
Դանիելյան	9	4	2	3	5
Կարակաշյան	9	4	2	3	5

Ծանոթություն՝ Մարոկկոյի հավաքականի հետ 3:0 հաշվով հաղթանակ է շնորհվել մեր թիմին:

«Ազգ»-ի խմբագրությունը շնորհակալություն է հայտնում շախմատային մեկնաբան Գագիկ Հովհաննիսյանին, համաշխարհային օլիմպիադան թերթի էջերում օպերատիվ լուսաբանելու համար: ■

Ֆուտբոլային կրքեր. ու՞ր են մերոնք...

«Հյուրհիլեթ»-ի թղթակից Ռաուֆ Թամերը այն հեղինակներից է, որ նյութի ընտրության հարցում բոլորովին դժվարության չի հանդիպում: Միաժամանակ ասենք, որ հումորի զգացումը նրան առհասարակ չի լքում: Ահա Եւրոպայի ֆուտբոլի առաջնությունը հիմք է ծառայել Թամերի համար, որ նա մասնակից երկրների վերաբերյալ նախ ներկայացնի թուրք հասարակության մեջ արմատացած կարծիքը, ապա դառը հեգնանքով արձանագրի, թե Թուրքիայի բարեկամների թիվը սահմանափակվում են Ադրբեջանով ու Պակիստանով: Համենայնդեպս, «Հյուրհիլեթ»-ի հունիսի 16-ի համարում զետեղված նրա հոդվածը բավականին հետաքրքրական է, կարծում ենք կարժանանա ընթերցողի ուշադրությանը:

Հ. Զ.

Եւրոպայի առաջնությունը սկսվել է: Գիշերները լի են ֆուտբոլով: Կանայք տրամադրություն բոլորովին չունեն, որովհետեւ ֆուտբոլը տղամարդկանց ամբողջովին գամել է հեռուստաէկրաններին: Անգամ զրուցելու ցանկությունը չքացել է: Ասված չանի, հանկարծ հնչի դռան զանգը: Սրտաճաք ենք լինում, թե հյուր է գալիս: Չնայած ո՞վ է հյուրին հաշվի առնում: Ազատությունը վրա է հասել: Տղամարդիկ մի սենյակում, կանայք մյուսում են հավաքվում: Եթե Եւրոպայի առաջնությունը չլիներ, միեւնույն է, ֆուտբոլի տեղը գրավելու էր քաղաքականությունը: Կամ ելնելով իրադրությունից, զրույցի նյութ էր դառնալու երկրի տնտեսական իրավիճակը: Ծայրագույն դեպքում դեռասաններին բամբասելը կա ու կա: Քի՞չ ենք բամբասել, դա մեր հասարակության ամենասիրած զբաղմունքներից է: Տեսեք, թե վերին աստիճանի քաղաքակիրթ թուրք տղամարդիկ, զավակներն այն երկրի, որ 20-րդ դարը ժամկետից շուտ հաղթահարել եւ դրել է 21-րդ դար, մոռացության մատնելով կանանց, միասնաբար հետեւում են ֆուտբոլի ոնպորտաժներին:

– Դե լավ, բայց ո՞ւմ ենք երկրպագում: Հարցը դժվար է, կարծես թե ոչ մեկին: Սակայն անիծյալ ֆուտբոլն այն մոլուցքն է, որ առանց որեւէ թիմի երկրպագելու համ ու հոտ չի լինում:

– Բայց լավ, ո՞ւմ երկրպագել: Ռուսաստանին չենք կարող, որովհետեւ անմիջապես կտարկեն, ասելով. «ի՞նչ Ռուսաստան, մեր դարավոր թշնամին է»:

Գերմանիային երկրպագելը նույնպես նպատակահարմար չէ: Մի՞թե չեն ասի. «Ինչպե՞ս թե, Գերմանիան դեռ երեկ զենքի մատակարարումները Թուրքիա դադարեցնելու որոշում էր ընդունել»:

– Դե լավ, Ֆրանսիային:

– Բայց չէ՞ որ Ֆրանսիան հայերին է ծառայում: ԱՍԱԼԱին ոպկա՞ս էր աջակցել:

– Այդ դեպքում եկեք երկրպագենք Անգլիային:

– Ինչպե՞ս, Թուրքիայի հանդեպ միշտ նենգամիտ քաղաքականություն է վարել:

– Ուրեմն մնում է Շվեդիան:

– Ի՞նչ Շվեդիա, մոռացե՞լ եք որ Շվեդիան ինչպես էր քաղաքական աղասան տալիս նրանց, որքեր ներսից քայքայում էին Թուրքիան:

Չկա մի երկիր, որի հետ մեր հարաբերությունները փչացած չլինեն: Բայց ի՞նչ անենք: Եղբայրական Ադրբեջանի հավաքականն առաջնությանը չի մասնակցում, որ նրան երկրպագենք: Պակիստանը նմանապե՞ս: Լավ, ինչպես վարվենք:

Երանի թե առաջնությանը մասնակցեր Թուրքիայի հավաքականը: Շատ ափսոս: Համոզված եղեք, նույնիսկ կխաղար, միայն թե մասնակցելու իրավունք ձեռք բերեր: Դժվարը մասնակցելն է, թե չէ խաղալն ի՞նչ: ■

ՀՀ բարձրագույն խմբի առաջին առաջնություն

16-րդ տուր

1-ին ենթախումբ

«Բանանց» - ՀՄԸՄ՝ 1:0, «Արարատ» - «Նիգ»՝ 5:1, «Սյունիք» - «Նաիրի»՝ 1:1, «Մալաթիա» - «Ջորավան»՝ 1:4, «Ախթամար» - «Ալաշկերտ»՝ 1:3, «Լոռի» - ՀՄՄ-ՖԻՄՄ՝ 0:0

2-րդ ենթախումբ

«Դեբեդ» - «Կոտայք»՝ 2:6, «Կիլիկիա» - «Ջվարթնոց»՝ 5:4, «Վան» - «Շիրակ»՝ 0:0, «Քասախ» - «Շենգավիթ»՝ 1:1, «Իմոյլս» - «Ազնավուր»՝ 3:2:

Առաջնության աղյուսակները հունիսի 30-ի դրությամբ

1-ին ենթախումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Արարատ	16	13	2	1	69-10	28
2. Բանանց	15	12	3	0	43-7	27
3. ՀՄԸՄ	15	9	4	2	37-16	22
4. Սյունիք	14	6	5	3	29-22	17
5. ՀՄՄ-ՖԻՄՄ	16	5	5	5	21-19	17
6. Մալաթիա	16	5	5	6	24-29	15
7. Նաիրի	16	5	4	7	16-22	14
8. Ջորավան	16	6	1	9	24-27	13
9. Լոռի	16	3	5	8	19-36	11
10. Ալաշկերտ	15	3	2	10	21-48	8
11. Նիգ	16	3	1	12	13-42	7
12. Ախթամար	15	3	1	11	9-47	7

2-րդ ենթախումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Շիրակ	15	11	3	1	46-4	25
2. Կոտայք	16	11	3	2	44-15	25
3. Վան	16	10	3	3	34-15	23
4. Կիլիկիա	14	10	1	3	46-18	21
5. Ջվարթնոց	16	7	6	3	39-23	20
6. Շենգավիթ	16	6	4	6	21-27	16
7. Քասախ	15	5	5	5	12-16	15
8. Կանազ	14	6	2	6	24-20	14
9. Իմոյլս	16	4	0	12	18-34	8
10. Ազնավուր	15	2	3	10	17-31	7
11. Արաքս	15	2	3	10	9-43	7
12. Դեբեդ	16	1	1	14	16-79	3

Ձողացատկ. սանտիմետրի գինը

Սանտիմետրը 90 հազար դոլար. այսպիսին է ուկրաինացի ձողացատկող Սերգեյ Բուբկայի աշխարհի յուրաքանչյուր ռեկորդի գրեթե պաշտոնական գինը մրցումներում: Անցյալ շաբաթ Ֆրանսիայի Դիժոն քաղաքում նա սահմանեց 1984 թ. ի վեր աշխարհի երեսուներորդ ռեկորդը:

Առաջին տարիներին Բուբկան չէր տատանվում մի քանի սանտիմետրով ջարդուփշուր անել սեփական ռեկորդները: Այսպես, 1984 թ. նա Հռոմում իր սահմանած 5.94 մ.-ից մի փիչ ավելի ուշ Փարիզում միանգամից անցավ 6 մետրի: Այնուհետեւ Սերգեյն սկսեց մտածել, ինչը միջազգային ասպարեզում ոչ մի մրցակից չունի եւ ավելի բարձր ցատկելու վիթխարի պաշար ունի (մարզումների ժամանակ երբեմն նա ցատկում է 6,25 մետրից ավելի): Փոխնիփոխ ռեկորդներ սահմանելով դահլիճում եւ բաց օդում նա բարձունքները նվաճում է սանտիմետր առ սանտիմետր, մրցություն առ մրցություն, ամեն անգամ գրպանը դնելով նախորդ պայմանավորված չեկը: Եվ պատահական չէ, որ թեթեւատլետիկայի շրջանակներում այսօր նրան անվանում են «Պարոն 90 հազար դոլար»: ■



digitised by A.R.A.R.@

Իրան - Եվրոպա-ճանապարհ Անդրկովկասով

Թեհրանի եւ Անկարայի միջեւ քաղաքական հարաբերությունների անբարենպաստությունը լուրջ խոչընդոտներ եւ բարդություններ են առաջացրել այդ երկրի տարածքով Իրան ադրանք տեղափոխելու հարցում: Այդ իսկ պատճառով Իրանի պատասխանատու շրջանակները իրենց ուշադրությունը սևեռեցին նոր տարանցիկ ճանապարհ ստեղծելու հարցին, որը Եւրոպան Իրանին կկապի առանց Թուրքիայի տարածքով անցնելու:

Բուլղարիայից մեզ հասած տեղեկությունների համաձայն, Բուլղարիան, Վրաստանը եւ Իրանի Իսլամական Հանրապետությունը մտադիր են կառուցել նոր տարանցիկ ճանապարհ, որը Սեւ ծովի ափերը կմիացնի Իրանի հյուսիսին: Սոֆիայի օրաթերթերից մեկը, անցյալ շաբաթ տեղեկություններ տպագրելով այդ մասին, ավելացրել է, որ այդ ճանապարհը կառուցելու նախապատրաստական միջոցառումները արդեն ձեռնարկված են Իրանի, Բուլղարիայի եւ Վրաստանի ներկայացուցիչների կողմից վերջերս «Սեւ ծով-Իրանի հյուսիս» տարանցիկ ճանապարհի կառուցման վերաբերյալ նախնական համաձայնագիրը ստորագրելով: Կայացած բանակցությունների հիման վրա Բուլղարիայի, Վրաստանի եւ Իրանի համագործակցությամբ ադրանք տեղափոխելու տարանցիկ «ծով-ցամաք» ճանապարհ կկառուցվի, որը Բուլղարիայի Սեւ ծովի ափին Բուրգաս նավահանգիստը կկապի Վրաստանի նավահանգիստներից մեկին, ապա այստեղից ցամաքով կձգվի մինչեւ Կասպից ծովի ափերը կամ էլ Ադրբեջանի տարածքով կմիանա Իրանի հյուսիս-արեւմտյան սահմաններին: Համաձայնագրով նախատեսվում է, որ Իրանին պատկանող բեռները նավով Վրաստան կհասնեն եւ այստեղից էլ բեռնատար մեքենաներով կտեղափոխվեն Իրանի հյուսիս: Սոֆիայում հրատարակվող թերթը նշել է նաեւ, որ այդ ճանապարհի շահագործմամբ Եւրոպայի արեւմտյան եւ արեւելյան երկրներից Իրան փոխադրվող ադրանքների ծավալը զգալիորեն կավելանա: Բացի դրանից, Անդրկովկասի նոր անկախացած հանրապետությունները հնարավորություն կունենան ընդլայնել իրենց առեւտրական կապերը Իրանի, ինչպես նաեւ Ասիայի արեւմտյան երկրների եւ եւրոպական երկրների հետ: ■

Ուժի մեջ է մտել կրակի դադարեցումը

Ինչպես հաղորդեցին «ԻՏԱ»ին Հյուսիսային Օսիայի անվտանգության նախարարությունում, հունիսի 28-ին եւ լույս 29-ի գիշերը Ցխինվալի շրջանում հանգիստ էր: Լսվում էին միայն հրազենի առանձին կրակոցներ: Ոչ այս, ոչ էլ այն կողմը չէր օգտագործում հրթիռներ եւ ականներ:

Կրակի դադարեցման մասին պայմանավորվածությունը ձեռք էր բերվել Վրաստանի եւ Ռուսաստանի ղեկավարներ Բորիս Ելցինի եւ Էդուարդ Շեւարդնաձեի միջեւ հունիսի 24-ին կայացած հանդիպման ժամանակ:

Ինչպես հայտարարեց Հյուսիսային Օսիայի Գերագույն խորհրդի նախագահ Ախսարբեկ Գալազովը, եթե զինադադարը Հարավային Օսիայում տեւի մինչեւ այսօր, ապա խորհրդարանը կքննարկի ռազմական ճանապարհի բացման հարցը: Ճանապարհը, ինչպես նաեւ Վրաստան մտնող գազամուղը շրջափակվել էին Հյուսիսային Օսիայի Գերագույն խորհրդում, մայիսի 21-ին ընդունված որոշման համաձայն: Վրաստանի գազային շրջափակումը դադարեցվել էր անցյալ շաբաթվա վերջում: ■

Հակամարտությունը թեժանում է

Մոլդովայի պաշտպանության նախարարության մամուլի կենտրոնում հաղորդեցին, որ հունիսի լույս 20-ի գիշերը Պրիդնեստրովիեի զվարդիականները հրետակոծում էին Մոլդովայի ազգային բանակի եւ ոստիկանության դիրքերը Կոշնիցի եւ Կոչիերի գյուղերի ուղղությամբ: Հակամարտ կողմերը օգտագործում էին ականանետներ, նռնականետներ, «Ալազան» հրթիռներ, ծանր հրետանի: Բենդերիում զվարդիականները փորձել են գրավել ոստիկանության դիրքերը: Հարձակումը հետ է մղվել: Մոլդովայի պաշտպանության նախարարության մամուլի կենտրոնի աշխատակից Վիտալի Չոբրոտարուն հաղորդեց «ԻՏԱ»ին, որ այդ գիշեր կոնֆլիկտի գոտում զոհվել է 6 մարդ եւ 12-ը վիրավորվել: Տուժածների թվում են կոնֆլիկտի գոտում գտնվող Դորովսկոյե եւ Կոչիերի գյուղերի խաղաղ բնակիչները:

Պրիդնեստրովիեի կառավարության մամուլի կենտրոնում հաղորդեցին, որ հունիսի լույս 29-ի գիշերը Մոլդովայի ազգային բանակը եւ ոստիկանությունը հրետակոծում էր Դուբոսարիի շրջանում գտնվող զվարդիականների ամրոցները: Պրիդնեստրովիեի հանրապետության Գերագույն խորհրդի մամուլի քարտուղար Ելենա Եֆիմովայի խոսքերով, Բենդերիում իրավիճակը մնում է լարված: Ամեն փոքրիկ համար մարտեր են տեղի ունենում զվարդիականների եւ ոստիկանության միջեւ:

Երեկ Քիշնեւից կոնֆլիկտի գոտի են մեկնել ՄԱԿ-ի անկախ փորձագետները: ■

OK English OK

Անգլերենի արագացված դասընթացներ

Հրավիրում է «ՕՔԵՅ» կոոպերատիվը:

Սովորեցնում ենք խոսել, կարդալ, գրել:

Դասերը առավոտյան, ցերեկը, երեկոյան:

Լսարանները քաղաքի տարբեր մասերում:

Գինը՝ այսօր ավելի էժան, քան վաղը:

Շտապեցեք արժեզրկվող ձեր ռուբլիները փոխել մեր մշտարժեք գիտելիքների հետ:

Դրանք ձեզ վաղը դոլլարներ կբերեն:

Ջանգահարեք հենց հիմա 27-38-64, 34-79-38, 26-70-23, 34-30-19

Հայտարարություն

ՀՌԱԿ «Արշակ Չոպանյան» ակումբի նախաձեռնությամբ Հ. Մանուկյանի անվան թատրոն-ստուդիայում հուլիսի 1-ին ՆԳՆ մշակույթի պալատում կներկայացնի Հովհ. Թումանյանի «Հեքիաթներ» ներկայացումը: Բարեգործական նպատակներով այս եւ հետագա ներկայացումներից գոյացած գումարը կհրամադրվի արցախահայությանը:

Կոչ է արվում արձագանքելու վերոհիշյալ ծրագրին: Նյութական փոխանցումները կատարել ՀՌԱԿ հաշվի համարին.

700011 (կոդ՝ 370101705):

Նվիրատուների անունները կհրապարակվեն «Ազգ»ում:

Տոմսեր ձեռք բերելու համար դիմել «Ազգ»ի խմբագրություն: Հանրապետության 47, հեռ. 56-2863

ՀՌԱԿ Չոպանյան ակումբ
Մալյան թատրոն-ստուդիա

«Ազգ» թերթի համակարգչային ծառայությունը կատարում է Apple Macintosh համակարգիչների տեխնիկական ոռակյալ սպասարկում եւ ուսուցում:

ԱԶԳ

Դիմելով մեզ, դուք կարող եք ձեռք բերել հայերենի ավտոմատ տողադարձիչ:

«Ազգ»ի համակարգչային ծառայությունը ընդունում է նաեւ



- գովազդների
- խորհրդանիշների
- ֆիրմային նշանների
- կնիքների
- հրավիրատոմսերի
- տարբեր տեսակի ազդագրերի
- եւ ընդհանրապես, համակարգչային ձեւավորման պաշտոններ:

Դրանք կկատարվեն ձեր երեւակայածից բարձր մակարդակով:

Հասցեն. Երեւան, Հանրապետության 47, «Ազգ» թերթ. ☎ 58-18-41

ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱ DIAGNOSTICA

Դիմեք մեր բժշկական կենտրոններին, եւ Ձեր առողջությունը հուսալի ձեռքերում կլինի:

Երեւան, Աջափնյակ, Մարգարյան փ. 6, հեռ. 35-01-58, 35-13-01

Քանաքեռ, Ֆանարջյան փ. 55, հեռ. 28-75-24

Գյումրի, Շլեդրինի փ. 54ա, հեռ 3-60-72

Գորիս, Մաշտոցի փ. 3, հեռ. 2-26-87

Ստեփանակերտ, Սարխի փ. 6, հեռ. 4-10-06

ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ

☛ Առաջարկում է հիվանդությունների ախտորոշման բարձրագույն մակարդակ:

☛ Առաջարկում է ձեր առողջությունը ողջ կյանքի ընթացքում:

☛ Միայն մեզ Դուք կարող եք դիմել բոլոր հիվանդությունների դեպքում եւ բոլոր բժշկական հարցերով, քանի որ «ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱ»ն ոչ միայն միջազգային պահանջներին համապատասխանող ամենաժամանակակից սարքերն ու մասնագետներն ունի, այլեւ անհրաժեշտության դեպքում Ձեր բուժօգնությունը կազմակերպում է հանրապետությունից դուրս կամ համապատասխան մասնագետներ է հրավիրում:

☛ Միայն մեզ մոտ Դուք կարող եք ստանալ Ձեր ախտորոշումը կամ առաջարկել առողջությունը կայուն եւ ցածր գներով, անկախ ցույց տվող բուժօգնության ծավալից եւ տեսակներից:

☛ Ձեր հարմարության համար մենք աշխատում ենք ամեն օր (բացի կիրակի օրից), ժամը 8:30-ից մինչեւ 19:00, շաբաթ օրը՝ մինչեւ 15:00:

Կ2-Սերվիս

25.47.58
25.24.63

Եթե դուք նույնիսկ այս պայմաններում կարողանում եք աշխատեցնել Ձեր հիմնարկը, ուրեմն Ձեզ անհրաժեշտ է անթերի հաշվապահություն:

Դրա համար պետք է IBM հաշվիչ եւ մեր հետեւյալ ծրագրերը:

1. Հիմնական միջոցների հաշվառում, 2. Հաշիվ-ֆակտուրա, 3. Իրացում, 4. Մատակարարում, 5. Պահեստ, 6. Դեբետ-Կրեդիտ, 7. Աշխատավարձ, 8. Բալանս, 9. Ղեկավարի աշխատատեղ

IBM

ԱՅԺՄ ԵՐԵՎԱՆԻՑ ԱՄԵՆՈՒՐ

Առաջին անգամ Երեւանը կկապվի Արեւելքին եւ Արեւմուտքին եվրոպական «A-310» էյրբասի ուղղակի թռիչքներով:

LEVON TRAVEL

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ	ԵՐԹ	$900
	ԵՐԹՈՒԴԱՐՁ	$1369
ՆՅՈՒ ՅՈՐՔ ՕՏՏԱՎԱ ԿԱՄ ՄՈՆՐԵԱԼ	ԵՐԹ	$699
	ԵՐԹՈՒԴԱՐՁ	$949
ՍԻՆԳԱՊՈՒՐ	ԵՐԹ	$430
	ԵՐԹՈՒԴԱՐՁ	$650
ՄԵԼԲՈՒՌՆ	ԵՐԹ՝	$750
	ԵՐԹՈՒԴԱՐՁ	$1100
ԴՈՒԲԱՅ	ԵՐԹ	$280
	ԵՐԹՈՒԴԱՐՁ	$350

ԼԵՎՈՆ ԹՐԱՎԷԼ ԵՐԵՎԱՆ
Սայաթ-Նովա 10
Երեւան, Հայաստան
Հեռ. 583193 / 582831
Ֆաքս 522847 – Տելեքս 243398 LEVON SU

ՄԻՆՉԵՎ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ 10 ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՄԵԾ ԲԱՑՈՒՄԸ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԿԿԱՏԱՐՎԻ «ԱՆԻ» ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ, 636 ՍԵՆՅԱԿՈՒՄ, հեռ. 594636

Ամեն ոք կարող է անվճար փոխադրել մինչեւ 60 կգ իր

ՏԱՔՍԵՐԸ ՆԵՐԱՌՅԱԼ ՉԵՆ

«Արամ Խաչատրյան»

Ֆիլհարմոնիկ սրահ

«ԱՇԽԱՐՀԸ ԵՎ ՄԵՆՔ»

Սիմֆոնիկ երաժշտության ամառային օրեր

Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբ (ՀՖՆ)

Գեղարվեստական ղեկավար եւ դիրիժոր Լորիս Ճգնավորյան

Երեւանի սիմֆոնիկ նվագախումբ (ԵՍՆ)

Դիրիժոր Գեւորգ Մուրադյան

Փառատոնը լուսաբանում է «ԼՐԱԲԵՐԸ»

Հովանավոր՝ Անդրնավթագազին

ՊՐՈՄԵԹԵՎՍ

բաժնետիրական ընկերությունը

Հունիս 30 Գերմանիա. ՀՖՆ

Ռ. Վագներ Նախերգանք «Մայստերզինգերներ» օպերայից

Լ. Ճգնավորյան Ջութակի կոնցերտ Ռ. Դանիելյան

Ռ. Շտրաուս Սիմֆոնիկ պոեմ «Այպես ասաց Զրադաշտը»

Համերգների սկիզբը ժամը 19.30-ին

Տոմսերը վաճառվում են «Արամ Խաչատրյան» Ֆիլհարմոնիկ սրահի տոմսարկղում, ամեն օր ժամը 11-ից 18-ը

Azg Bi-daily, 47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010

Խմբագիր՝ Հ. ԱՎԵՏԻՔԵԱՆ
Editor H. AVEDIKIAN

Macintosh համակարգչային շարուածքը Ռ.Ա.Կ. մամլոյ եւ տեղեկատվության կենտրոնի

ՀՀ նախարարների խորհրդին առընթեր «Պարբերական» հրատ. տպարան, Արշակունեաց 2

Լուրերը Interfax-ի, «Սնարի» եւ մեր թղթակիցների

digitised by A.R.A.R.@